

ԿԱՆԱՆՑ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂ

ԱՌՅԱՆՑ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ

ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԿԱՆԱՆՑ ԹԻՐԱԽԱԿՈՐՈՂ ԱՌՑԱՆՑ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

© Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամ

Գյումրի, 2024



Այս հետազոտությունն իրականացվել է Բոլորը հանուն հավասար իրավունքների հիմնադրամի կողմից իրականացվող «Հզորացնելով կանանց. թվային պաշտպանություն անտելության խոսքի դեմ» նախագծի շրջանակում:



«Հզորացնելով կանանց. թվային պաշտպանություն անտելության խոսքի դեմ» նախագիծն իրականացվում է «ՀԱՎԱՍԱՐ-ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագրի շրջանակներում՝ ՕքսեՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդեռլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

03	Բովանդակություն
05	Հասկացությունների սահմանումներ
08	Ներածություն
12	Գրականության տեսություն
12	Ատելության խոսքի տարածման պատճառները
14	Պատճառված վնասի տեսակները
15	Կարգավորումներ և կանխարգելիչ միջոցներ
16	Մեթոդաբանություն
17	Դաշտային նյութի հավաքագրման ընտրանքի սկզբունքներ և գործիքներ
17	Նյութի վերլուծության մեթոդներ և գործիքներ
18	Հետազոտության հիմնական բացահայտումները
19	Բացահայտումներ
19	Բացահայտում 1. Քաղաքական համատեքստի փոխկապակցվածություն 1
21	Բացահայտում 2. Ատելության խոսքի կապը հրապարակման բովանդակությանը
24	Բացահայտում 3. Ատելության խոսքի բնույթը
25	Բացահայտում 4. Ատելության խոսքի հիմքը գենդերով
26	Բացահայտում 5. Ատելության խոսքի հիմքերը
27	Բացահայտում 6. Ատելության խոսքով օտարումն ու բաժանումը
30	Բացահայտում 7. Ատելության խոսքի թիրախավորման ձևը
33	Բացահայտում 8. Դավադրություններ և ապատեղեկատվություն պարունակող ատելության խոսք
34	Քննարկում
34	Գենդերի հիմքով ատելության խոսք/անձի թիրախավորումը որպես կին
36	Քաղաքական հայացքների հիմքով ատելության խոսք/անձի թիրախավորումը որպես քաղաքական միավորի՝ երկրի, ազգի կամ կրոնական դոմինանտ խմբի դեմ գործող դավաճան/թշնամի

37

Ատելության խոսքը՝ որպես քաղաքական գործիք

39 Եզրակացություն

40 Իրավական ուսումնասիրություն

40 Տեղական կարգավորումներ

43 Միջազգային դատական դեպքերի ուսումնասիրություն

44 Միջազգային կարգավորումներ

50 Ամփոփում

50 Առցանց ատելության խոսքի մասին օրենսդրության բացակայություն

50 Իրավական սահմանումների բացակայություն

51 Կիրարկման մեխանիզմները

52 Ազդարարման և մոնիտորինգի համապարփակ համակարգերի բացակայություն

53 Միջնորդների պարտավորություն

53 Հանրային իրազեկում և կրթություն

53 Խոսքի ազատության և դրա կանոնակարգման հավասարակշռում

54 Հետազոտության առաջարկներ

54 Թվային քաղաքականությանն ուղղված առաջարկներ

55 Կրթության քաղաքականությանն ուղղված առաջարկներ

55 ԶԼՄ-ների ինքնակարգավորմանն ուղղված առաջարկներ

56 Իրավական բարեփոխումներին ուղղված առաջարկներ

60 Աղբյուրներ

62 Հավելված 1

62 Առանցքային տեղեկատուների հետ ֆոկուս խմբային քննարկումների և անհատական խորքային հարցազրույցների անցկացման ուղեցույց

<p>Ատելության խոսք (անգլ.՝ Hate speech)</p>	<p>Արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ազգային, սեռական, գենդերային, կրոնական քաղաքական, սոցիալական և այլ հիմքերով ատելությունը, այլատյացությունը, անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևեր, ներառյալ՝ անհանդուրժողականությունն արտահայտված անհատների կամ խմբերի դեմ ագրեսիայի, խտրականության, թշնամանքի, վիրավորանքի ամենատարբեր արտահայտումներով և բռնության կոչերով:</p>
<p>Առցանց ատելության խոսք (անգլ.՝ Online hate speech)</p>	<p>Թվային միջավայրում, հիմնականում երկկողմ և բազմակողմ հաղորդակցության հարթակներում, այդ թվում՝ նաև սոցիալական մեդիայում արտահայտվող ատելության խոսք:</p>
<p>Ատելության խոսքի ուժգնություն/ինտենսիվություն (անգլ.՝ Intensity of hate speech)</p>	<p>Ատելության խոսքի ինտենսիվության աստիճանը վերաբերում է նրան, թե որքան ուժեղ կամ ուժգին է արտահայտվում ատելության խոսքը, ինչպես օրինակ՝ վիրավորական խոսքի օգտագործումը, սադրումը, սպառնալիքը կամ բռնության դրդումը:</p>
<p>Ատելության խոսքի հիմք (անգլ.՝ Basis of hate speech)</p>	<p>Ատելության խոսքի հիմքը վերաբերում է արտահայտման ձևերի հիմքում ընկած կողմնակալություններին, կարծրատիպերին, գայրույթի, անհանդուրժողականության դրսևորումներին կամ խտրական վերաբերմունքին, քաղաքական և սոցիալական օրակարգերին, գրագիտությանը և մշակութային առանձնահատկություններին, որոնք դրդում և խթանում են անհատի կամ որոշակի խմբի նկատմամբ ատելության խոսքի կիրառումը: Այլ կերպ ասած, ատելության խոսքի հիմքում դրա պատճառներն ու դրդապատճառներն են, որոնք կարող են պայմանավորված լինել անձի քաղաքական հայացքներով, գենդերով, սոցիալական, ընտանեկան կարգավիճակով, ռասայով, էթնիկ ծագմամբ և այլն:</p>

<p>Ատելության խոսքի բնույթ (անգլ.՝ Nature of hate speech)</p>	<p>Ատելության խոսքի բնույթը վերաբերում է ատելության խոսքի արտահայտման ձևերին, ինչպիսիք են ապամարդկայնացնող լեզուն, օտարմանն ու անջատմանն ուղղված կոչերը, բռնության կոչերը, թշնամանքի արտահայտումն ու հրահրումը, վիրավորանքը, սեռական բնույթի հայհոյանքը, սադրանքը, որոշակի խմբերի բացառումն ու մարգինալացումը, կարծրատիպավորումը և այլն:</p>
<p>Կարծրատիպավորում (անգլ.՝ Stereotyping)</p>	<p>Ատելության խոսքում կարծրատիպային ձևավորումը ներառում է խմբի վերաբերյալ չափազանց պարզեցված և հաճախ բացասական ընդհանրացումների օգտագործում՝ կարծրատիպերն ու խտրականությունն արդարացնելու համար: Ատելության խոսքը մեծապես հիմնված է կարծրատիպերի, խմբի մասին լայնածավալ և ոչ ճշգրիտ հայտարարությունների վրա՝ թիրախավորելով անհատներին և վերջիններին հասցեավորելով ենթադրյալ և բացասական հատկանիշների շարք:</p>
<p>Օտարում/անջատում (անգլ.՝ Othering)</p>	<p>Ատելության խոսքի տեսակետից օտարումը ներառում է անհատներին կամ խմբերին հիմնավորապես տարբերելու և ստորադաս ներկայացնելու գործընթացը, որը միտված է ստեղծելու «մենք ընդդեմ նրանց» դիմամիկան: Այս գործընթացն ակնհայտ է ատելության խոսքում, որն ընդգծում է տարբերությունները՝ քաղաքական, սոցիալական, մշակութային, ռասայական, կրոնական կամ այլ հիմքով:</p>
<p>Բացառում (անգլ.՝ Exclusion)</p>	<p>Ատելության խոսքի համատեքստում բացառումը վերաբերում է լեզվին և արտահայտություններին, որոնք նպատակ ունեն բացառել և մարգինալացնել անհատներին կամ խմբերին՝ ելնելով նրանց ինքնությունից և սոցիալ-քաղաքական հայացքներից: Ատելության խոսքը կարող է բացահայտ կամ անուղղակիորեն հուշել, որ որոշ մարդիկ չեն պատկանում կամ արժանի չեն լինել համայնքի, հասարակության կամ ազգի մաս:</p>
<p>Ապամարդկայնացում (անգլ.՝ Dehumanization)</p>	<p>Ապամարդկայնացումը նույնն է, ինչ դիվայնացումն ու հրեշացումը: Անհատին կամ խմբին ներկայացվում է որպես մարդկային հատկանիշներ չունեցող, դրանցից զուրկ կամ ընդհանուր արժեհամակարգից դուրս, մարդուց ստորադաս,</p>

	<p>որը միտված է արդարացնել խտրական գործողությունները, ատելությունը կամ բռնությունը: Սա անհատի կամ խմբի մարդկային կերպարի ոչնչացմանն ուղղված տեխնոլոգիա է, որի միջոցով միտումնավոր բացասական կարծիք է ձևավորվում անձի, խմբի, պետության, որևէ գաղափարախոսության մասին՝ ներկայացնելով այն որպես թշնամական, կործանարար, դիվային և հրեշավոր:</p>
<p>Գծային հաղորդակցության մոդել (անգլ.՝ Linear model of communication)</p>	<p>Հաղորդակցության գծային մոդելը միակողմանի գործընթաց է, որտեղ հաղորդագրությունն առանց հետադարձ կապի հասցեագրվում և ուղարկվում է ստացողին/հասցեատիրոջը կամ լսարանին:</p>
<p>Ինտերակտիվ հաղորդակցության մոդել (անգլ.՝ Interactive model of communication)</p>	<p>Հաղորդակցության ինտերակտիվ մոդելը ճանաչում է հաղորդակցությունը որպես երկկողմանի գործընթաց, որը ներառում է ստացողի արձագանքը դեպի ուղարկողին: Երկու մասնակիցներն էլ հերթով դառնում են ուղարկող և ստացող՝ ստեղծելով տեղեկատվության ավելի դինամիկ փոխանակում:</p>
<p>Տրանսակցիոն հաղորդակցության մոդել (անգլ.՝ Transactional model of communication)</p>	<p>Հաղորդակցության տրանսակցիոն մոդելը դիտարկում է որպես միաժամանակյա, փոխադարձ գործընթաց, որտեղ բոլոր մասնակիցները միաժամանակ և՛ ուղարկողներ են, և՛ ստացողներ: Այն ընդգծում է հաղորդակցության դինամիկ և շարունակական բնույթը՝ մշտական հետադարձ կապը և ինֆորմացիոն փոխազդեցությունը:</p>

Հայաստանյան մեդիա տիրույթում աստելության խոսքի չափաբաժինը մտահոգիչ մասշտաբներ ունի: Առավել ինտենսիվ և հանրության համար տեսանելի կերպով այն տարածվում է սոցիալական մեդիայի՝ զանգվածային լրատվամիջոցներին պատկանող էջերում: Այս էջերում հրապարակումների ներքո առկա մեկնաբանությունների դաշտը յուրահատուկ հանրային տարածք է, որտեղ ցանկացած օգտատեր իր ինքնությանը համապատասխան կամ կեղծ օգտահաշվի միջոցով կարողանում է հրապարակել ցանկացած տեքստ: Մեծ թվով օգտատերեր այս հնարավորությունն օգտագործում են հանրային կերպարներին, այդ թվում՝ կին հանրային և քաղաքական գործիչներին թիրախավորելու համար: Այս երևույթը վնասակար և վտանգավոր է ոչ միայն իր անկառավարելի բնույթի պատճառով, այլ նաև այս տեքստերի բարձր տեսանելիության ու լայն հասանելիության պատճառով, ինչն իր հերթին մեծացնում է վնասի չափը, ընդլայնում աստելության խոսքի աշխարհագրությունը: Մյուս կողմից, շատ կարևոր է, որպեսզի լրատվամիջոցները պատասխանատվություն ստանձնեն ոչ միայն իրենց կողմից հրապարակված նյութերի, այլև դրանց արդյունքում սոցիալական մեդիա հարթակներում ձևավորվող քննարկումների համար և վերահսկեն այդ գործընթացներն ու մոդերացնեն մեկնաբանությունների բովանդակությունը, որոնք պարունակում են աստելության խոսք:

Այս ուսումնասիրությունը պատասխան է այն հարցին, թե ինչ բնույթ ունի հասարակական և քաղաքական գործունեություն ծավալող կանանց ուղղված աստելության խոսքը սոցիալական հարթակներում, և թե որտեղ են դրա հիմքերը: Հաշվի առնելով Ֆեյսբուք և Յություբ սոցիալական ցանցերի հանրայնացումը և դրանցում սոցիալական բազմազան շերտերի ներկայությունը՝ հետազոտությունն իրականացնող խումբն ընտրել է հենց այս հարթակներում լրատվական էջերի գրառումների մեկնաբանությունների բաժինը: Այն հաղորդակցության գործարքային (անգլ.՝ transactional) մոդելի ստանդարտ օրինակ է և արտացոլում է բոլորովին չուղղորդված և/կամ տարբեր կենտրոններից ուղղորդվող ինքնաբուխ հաղորդակցությունը, ինչը, առկա իրավիճակում, վերահսկելն ու կարգավորելը հնարավոր է միայն տվյալ մեդիայի էթիկական չափանիշներին չհամապատասխանող մեկնաբանությունները ջնջելու եղանակով:

Հետազոտական նպատակով նյութը հավաքելու և դասակարգելու համար սահմանված ժամանակահատվածը 2021-ի հունվարի 1-ից 2023-ի դեկտեմբերի 31-ն է, այլ կերպ ասած՝ հետպատերազմական ժամանակահատվածը:

Առցանց աստելության խոսքը հասկանալու համար կիրառվել են որոշակի չափանիշներ, որոնք հուշում են անձի թիրախավորման, վիրավորանքի, բռնության կոչի տարրերի առկայությունը: Իր բարդ և բազմաչափ բնույթի պատճառով դժվար է գտել և առանձնացնել միայն բռնության կոչեր պարունակող արտահայտությունները, խտրականությունը և այլն: Մեդիամոնիտորինգի առաջին փուլում առանձնացվել են վիրավորական և նվաստացնող բնույթի արտահայտությունները, որից հետո դասակարգվել են դրանք՝ ըստ թեմայի, բնույթի և աստելության խոսքի հիմքի:

Մեդիամոնիտորինգից բացի, ուսումնասիրությունը ներառում է նաև առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցներ և ֆոկուսխմբային քննարկումներ: Իրականացվել են երկու անհատական հարցազրույցներ Հայաստանում գեներային խնդիրներով զբաղվող փորձագետների հետ և երկու ֆոկուսխմբային քննարկում, որի մասնակիցները եղել են մեդիա ոլորտի աշխատակիցներ և քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցիչներ, որոնք իրենց աշխատանքում առնչվում են ատելության խոսքի և գեներային անհավասարության դեմ պայքարի հարցերին:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ամենաառանցքային օրինաչափություններն ու միտումները կապված են ատելության առկա խոսքի քաղաքական և գեներային բնույթի հետ: Ի պատասխան քաղաքական թեմաներով հրապարակումների՝ մեկնաբանությունների բաժինը լի է քաղաքական հայացքների հիմքով ատելության խոսքով, ինչը՝ որպես հավելյալ, դիրքորոշումը սրող, վիրավորանքը կրկնապատկող գործոն, ձևակերպված է որպես գեներայի հիմքով ատելության խոսք: Արդյունքում առաջանում է երկու վտանգավոր երևույթ: Առաջինը, որ քաղաքական հայացքների քննադատությունը դուրս է գալիս իր սահմաններից և թիրախավորում անհատի անձնական, հանրային գործունեության հետ չառնչվող հատկանիշները: Երկույթը լի է բազմաթիվ վտանգներով, քանի որ խոչընդոտում է կանանց՝ հանրային գործունեություն ծավալելու որոշումը, դրդում արդեն գործող քաղաքական և հասարակական դերակատարներին խուսափել հանրային ելույթներից և կարծիք արտահայտելուց: Ավելին, կանանց՝ այս ծավալների թիրախավորումը պարունակում է նրանց հոգեբանական երկարաժամկետ մի շարք վնասներ հասցնելու վտանգներ: Երկրորդ վտանգավոր երևույթն ավելի լայն է, քան անհատին հասցվող վնասները, և կրում է երևույթի հետ առնչվող (այս տեքստերը գրող, դրանք կարդացող) զանգվածների արժեհամակարգի և լեզվամտածողության վրա բացասական ազդեցություն: Անկախ նրանից, թե ատելության խոսք պարունակող տեքստերը նպատակաուղղված են թիրախավորել կանանց՝ որպես գեներային խումբ, թե ոչ, գեներայի հիմքով վիրավորական արտահայտությունները նպաստում են գեներային կարծրատիպերի ամրապնդմանը, լեզիտիմացնում են գեներային խտրականությունն ու բռնությունը: Այս տեսանկյունից առավել վտանգավոր է հանրային գործունեություն, ճանաչելիություն և հեղինակություն ունեցող անձանց կողմից ստեղծվող և տարածվող՝ կանանց թիրախավորող ատելության խոսքը՝ ի տարբերություն առանձին օգտատերերի գրառումների և մեկնաբանությունների: Պատճառներից մեկը հանրային դեմքերի խոսքի ավելի մեծ լսարանն է, մյուսը՝ քաղաքական առաջնորդի օրինակին հետևելու մեծ հավանականությունը: Այս միտումները պարզորոշ կերպով նկատելի են եղել ուսումնասիրության ընթացքում կուտակված նյութերում, թե ինչպես քաղաքական առաջնորդների կիրառած թիրախավորող, խտրական և թշնամական բնույթի բառապաշարը յուրացվել է համակիրների շրջանում և ակտիվորեն շրջանառվել ընդդեմ քաղաքական հակառակորդների՝ այս կերպ ամբոխահաճո քաղաքական առաջնորդների կողմից կիրառվելով որպես զենք իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար:

Այս հետազոտությունը ներառում է նաև իրավական դաշտի ուսումնասիրություն, որի առարկա են հանդիսացել տեղական օրենսդրությունը, միջազգային օրենսդրությունը և դեպքերի ու նախադեպերի ուսումնասիրությունը: Դրանք ի ցույց են դրել զարգացած և զարգացող երկրներում ատելության խոսքի

դեմ պայքարի առաջնահերթությունը: Մյուս կողմից, ակնհայտ է, որ Հայաստանի իրավական դաշտը չունի բավարար կարգավորումներ, որոնք կնպաստեն խնդրի չեզոքացմանը և ատելության խոսքի կանխարգելմանը: Իրավական դաշտի թերի և ոչ համալիր անդրադարձը ստեղծում է բազմաթիվ հնարավորություններ օրենքը շրջանցելու և ատելության խոսքն ուղղակի կամ անուղղակի կերպով արտահայտելու և տարածելու տեսակետից: Ավելին, հեղիեղուկ ձևակերպումներն իշխանություններին հնարավորություն են ընձեռում ապակայունացնել խոսքի ազատության և ատելության խոսքի հավասարակշռման սկզբունքը, և այն օգտագործել ի շահ քաղաքական նպատակների:

Ինչ վերաբերում է գեկույցում տեղ գտած առաջարկներին, ապա դրանք բաժանված են չորս հիմնական ուղղությունների՝

- ա)** Թվային քաղաքականություններին ուղղված առաջարկներ,
- բ)** Կրթության քաղաքականությանն ուղղված առաջարկներ,
- գ)** ՉԼՄ-ների ինքնակարգավորմանն ուղղված առաջարկներ,
- դ)** Իրավական բարեփոխումներին ուղղված առաջարկներ:

Առաջարկները հիմնականում ներառում են կատարող կողմի պատասխանատվությունը և միջնորդության ուղղությունները՝ թվային գործիքների և լուծումների ստեղծում, մոնիտորինգային և հաշվետվողականության մեխանիզմների կիրառում, կրթական համակարգում թեմայի ինտեգրում, հանրային իրազեկման լայն միջոցառումների իրականացում, ՉԼՄ-ների բարեվարքության խթանում և ինքնակարգավորման մեխանիզմների կիրառում, սոցիալական մեդիա հարթակների նկատմամբ պարտավորությունների սահմանում և իրավական կարգավորումների, օրենսդրական միջոցների բարելավում:

Պետական տարբեր գերատեսչություններին և քաղաքացիական հասարակության կառույցներին ուղղված այս առաջարկների փաթեթը համալիր է. առաջարկները կարող են նպաստել խնդիրների լուծմանը զուգահեռ և համատեղ իրականացման պարագայում, մինչդեռ մասնակի կատարման դեպքում դրանք կարող են խնդիրները լուծել որոշակի դաշտում, որոշակի ժամանակահատվածում և որոշակի շերտերում միայն: Առաջարկների ուղղությամբ բարեփոխումների ռազմավարությունների և գործողությունների պլանի մշակումը պետք է իրականացվի համատեղ՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության համատեղ ջանքերով, այլապես դրանք կարող են իրականացվել ոչ լիարժեք և միակողմանի կարիքների բավարարմամբ: Սա կարող է հանգեցնել այլ խնդիրների ի հայտ գալուն: Օրինակ՝ խոսքի ազատության անհարկի սահմանափակմանը և քաղաքացիների ազատ կամարտահայտման նկատմամբ իշխանության գործադրմանը, որը ծառայած մարտահրավեր է զարգացող և ժողովրդավարական երկրներում:

Չեկույցը բաղկացած է հինգ հիմնական բաժիններից: Առաջինը գրականության տեսությունն է, այն քննարկում է ատելության խոսքի և կանանց նկատմամբ գենդերային անհավասարության վերաբերյալ արդեն արված ուսումնասիրությունները, այլ ժամանակներում և այլ երկրներում ուսումնասիրված դեպքերը՝ օգնելով հասկանալ իրավիճակն ու համատեքստը հայաստանյան առցանց տիրույթում: Երկրորդը հետազոտության

մեթոդաբանությունն է, որը նկարագրում է հետազոտության փուլերը, կիրառված գործիքները: Բացահայտումների բաժնում տեղ են գտել հիմնական օրինաչափություններն ու միտումները, որից հետո «Քննարկում» բաժնում այս տվյալները դրվել են ավելի լայն համատեքստի մեջ իրավիճակն ավելի ընդհանրական տեսքով հասկանալու, մեծ պատկերը տեսնելու համար: Հետազոտության մաս է նաև իրավական ուսումնասիրությունը, որտեղ ներկայացված են ատելության խոսքի դեմ պայքարի՝ ինչպես տեղական, այնպես էլ տարբեր երկրների փորձն օրենսդրական կարգավորումների տեսանկյունից: Հաշվի առնելով հասանելի բոլոր տվյալները՝ Հայաստանում գործող իրավական լուծումներն ու լրատվամիջոցների էթիկական կարգավորումները, մշակվել են առաջարկներ, որոնք ներկայացված են վերջին գլխում:

Առցանց տիրույթում ատելության խոսքի տարածումը մտահոգություն է հարուցել դեռևս ինստունակամներից, երբ որոշ երկրներում համացանցի զանգվածային հասանելիություն կար, սակայն դրա ամենամեծ ալիքն սկսվում է սոցիալական ցանցերի ի հայտ գալուն զուգահեռ: Այս պահին է, որ առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է հայտնվում կին հանրային դերակատարների նկատմամբ ատելության խոսքը: Սա պայմանավորված է երկու հիմնական գործոններով, որոնցից մեկը կին դերակատարների գործունեության տեսանելիության բարձրացումն է, իսկ մյուսը՝ սոցիալական ցանցերի զանգվածային կիրառումը, որը յուրաքանչյուր օգտատիրոջ հնարավորություն է տալիս ստեղծել կամ տարածել իր նախընտրած բովանդակությունը:

Ատելության խոսքի տարածման պատճառները

Մի կողմ թողնելով նպատակաուղղված և որոշակի աղբյուրներից պլանավորվող և կառավարվող ատելության խոսքի ալիքները՝ ատելության խոսքի, մասնավորապես, առցանց տիրույթում տարածվելուն նպաստող հիմնական պայմանները, քննարկվում են՝ հիմնվելով հետևյալ գործոնների վրա. անանունություն, անտեսանելիություն/տեսանելիություն, որևէ համայնքի պատկանելիություն, ինքնաբուխություն և (ի տարբերություն վերբալ ատելության խոսքի) առավել մեծ վնասի չափաբաժին (Brown 2018, էջ 297-326, Ullmann & Tomalin 2019):

Այս հետազոտության թիրախային խմբի համատեքստում **անանունություն և անտեսանելիության գործոնը** որոշիչ է՝ հաշվի առնելով, որ սոցիալական ցանցերի ատելություն տարածող օգտատերերից ոչ բոլորն են իրենց իրական (ինքնությանը բնորոշ) օգտահաշիվներն օգտագործում, ավելին, իրական օգտահաշիվներ կիրառելու դեպքում քիչ է հավանականությունը, որ տվյալ հանրային գործիչը կկարողանա կամ կփորձի պարզել յուրաքանչյուր օգտատիրոջ ինքնությունը և վնաս հասցնել ի պատասխան իրեն ուղղված վիրավորական, արժանապատվությանը և հեղինակությանը վնասող կամ վնասարար այլ բնույթի գրառման: Որևէ **համայնքի պատկանելու գործոնը** նույնպես արդիական է, Հայաստանի տարբեր մասերում, Հայաստանից դուրս նույն քաղաքական դիրքորոշումն ունեցող մարդկանց միավորվելու և սոցցանցերում ընդդեմ քաղաքական հակառակորդների միասնական գործելու մեխանիզմն ակնհայտորեն աշխատում է: Հայաստանից դուրս բնակվող և սոցցանցերում գրանցված օգտատերերը հնարավորություն են ստանում միավորվել երկրում գտնվող քաղաքական համակիրների հետ, ակտիվորեն դիրքորոշում արտահայտել ատելության խոսքի միջոցով, միևնույն ժամանակ պարագայում՝ իրական հաղորդակցության մեջ իրենք հնարավորություն չէին ունենա մասնակցել այդ բանավեճին: Առցանց տիրույթում ատելության խոսք տարածելուն նպաստող հաջորդ կարևոր գործոնն **ինքնաբուխ արտահայտվելու հնարավորությունն է**, գրառմանը կամ մեկնաբանությանը ցանկացած այլ օգտատիրոջ պատասխանը, որը խրախուսում է ատելություն տարածող այլ օգտատերերին ևս միանալ կամ նույն բառամթերքով հակադրվել, ինչն ավելի է բորբոքում իրավիճակը, արժանապատվությունը վնասող խոսքը տարածում, տեսանելի դարձնում առավել

մեծ քանակով ընթերցողների համար: Տպագիր մամուլում կամ իրական հաղորդակցության մեջ միգուցե նույն անձինք, մինչև տեխնիկապես հնարավորություն ստանային արտահայտվել, կվարանեին իրենց դիրքորոշումը ատելության խոսքի ձևով արտահայտել, մինչդեռ ակնթարթորեն մտքերն արտահայտելու հնարավորությունն ստանալը թույլ է տալիս անմիջապես արձագանքել՝ վայրկյանական, ակնթարթային զայրույթի և վրդովմունքի ազդեցության տակ: «Եթե ավանդական մեդիայում հնարավոր է նախապես ֆիլտրել հեռարձակվող բովանդակությունը՝ համապատասխանեցնելով կազմակերպության էթիկական կանոններին, ապա սոցիալական մեդիայում բովանդակությունը կարող է ֆիլտրվել (գտվել) միայն հրապարակումից հետո»: «Ի տարբերություն առերես հաղորդակցության ձևերի, համացանցը հնարավորություն է տալիս վայրկյանական արձագանքելու, բավարար չափով չկշռադատված և չմշակված արտահայտություններ անելու (Brown 2018, էջ 311): Արտահայտվելու սպոնտանության հարցը և դրանից բխող հետևանքները/արդյունքները կարելի է դիտարկել նաև հաղորդակցության գծային և գործարքային (անգլ.՝ transactional) մոդելների տեսանկյունից: Ավանդական մեդիայի հետ համեմատելիս կարևոր է հաշվի առնել, որ սոցիալական մեդիայում հաղորդակցությունը գործարքային է, տրամադրված լրատվությանը հնարավոր է արձագանքել, մինչդեռ, օրինակ՝ հեռուստատեսության, ռադիոյի, թերթերի դեպքում կան միայն տեղեկատվությունն ուղարկողներ և այն ստացողներ: Դրան արձագանքել կնշանակի պատասխան հողված գրել, պատասխան ռեպորտաժ նկարահանել և այլն:

Հաղորդակցության մոդելների (գծային/linear, ինտերակտիվ/interactive և գործարքային/transactional) դուրսբերումն առավել հստակ ներկայացնում է սոցիալական մեդիայի տրամադրած հաղորդակցության հնարավորությունները, որոնք մեծամասամբ համընկնում են գործարքային մոդելի հետ, որտեղ հաղորդակցության մասնակիցները թե՛ ուղարկողներ են, և թե՛ ստացողներ, որտեղ մեծ կարևորություն է ստանում համատեքստը, անձնական փորձառությունը և այլ գործոններ (Akin et al. 2013, էջ 43-62, Woodward 2000, էջ 256-259):

Եվ վերջապես, առանց զգալի ժամանակ ծախսելու և ջանք գործադրելու, թիրախային խմբին **վնաս պատճառելու** հնարավորությունն առցանց ատելության խոսքն ավելի կիրառելի է դարձնում: Եթե ավանդական մեդիայում այս խնդիրները լուծվում են նախքան կյուրթի հեռարձակումը՝ կարգավորվելով էթիկական կանոններով, ապա առցանց մեդիայի դեպքում խնդրի կարգավորման՝ մեկնաբանության հեռացման պահին արդեն վնասը հասցված է, կիրառված միջոցները՝ ուշացած (Brown 2018, Ullmann & Tomalin 2019):

Բանավոր խոսքի համեմատ առցանց ատելության խոսքը շատ ավելի մեծ վնասներ է հասցնում, քանի որ այն չի վերաբերում միայն մեկ որոշակի իրավիճակի, այլ մշտական է, կարող է ի հայտ գալ, շահարկվել հետագայում ցանկացած պահի: Հասցված վնասի տեսանկյունից այն ավելի մեծ սպառնալիք է՝ հաշվի առնելով, որ այն ֆիզիկական տարածքում չի գտնվում: Ատելության խոսքի այլ ձևերի համեմատ առցանց խոսքն ավելի քիչ կառավարելի է, և քիչ են հնարավորությունները դրանից խուսափելու, դրանք կանխարգելելու (Dreißigacker et al., 2024, էջ 3):

Պատճառված վնասի տեսակները

Առցանց ատելության խոսքի պատճառած վնասները դրսևորվում են թե՛ անհատական, թե՛ հանրային մասշտաբներով: Առկա գրականության վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ առցանց ատելության խոսքի վտանգները հավանական/ենթադրվող վտանգներ չեն, նույնիսկ, եթե տվյալ պահին դեռ հայտնի չէ, թե ինչ տեսակի և ինչ մասշտաբների վնասի մասին է խոսքը, այս երևույթը մշտապես և անխուսափելիորեն նշանակալի վնասներ է հասցնում թե՛ անհատական, և թե՛ խմբային մակարդակներում, որի հետևանքները շարունակում են իրենց բացասական ազդեցությունը թողնել ամիսներ և նույնիսկ տարիներ անց (Keipi et al. 2016: 75, Saha et al. 2019): Իր առանձնահատուկ հատկանիշների շնորհիվ առցանց ատելության խոսքը կարող է խորը ազդեցություն ունենալ գոհի հոգեբանական բարօրության (wellbeing) վրա՝ առաջացնելով վախի, հուզմունքի և անապահովության զգացողություն (Dreißigacker et al., 2024, էջ 7):

Հասարակական մակարդակում առցանց ատելության խոսքը բևեռացման, խտրականության և բռնության տրամադրվածություններ ստեղծող կամ արդեն առկա տրամադրություններն ամրապնդող և լեզվատիմացնող, արդարացնող ազդեցություն է ունենում, մասնավորապես, եթե ատելության խոսքը հնչում է մեծ ճանաչում ունեցող դերակատարների՝ քաղաքական ղեկավարների, հանրային դեմքերի և այլ ազդեցիկ անձանց ելույթներում: Վերբալ թվային բռնությունն ինքնին թե՛ հոգեբանական, և թե՛ ֆիզիկական վնասների է հանգեցնում թիրախավորվող անձանց, սակայն դրանից զատ նաև նպաստում է թիրախավորվող խմբի դեմ ֆիզիկական բռնության համար գաղափարապես «պատրաստվելուն»: Այն կարող է ուղիղ կերպով չնպաստել ահաբեկչությանը կամ ֆիզիկական բռնության դեպքերին, փոխարենը հող նախապատրաստել, լեզվատիմացնել գաղափարներ, որոնցով սնուցվում է բռնությունը: Այն օգնում է գաղափարական նախապատրաստվածությանը՝ կիրառել ֆիզիկական բռնություն այն մարդկանց նկատմամբ, ովքեր դիրքավորված են որպես թշնամի (Husso et al. 2020: 226): Ուսումնասիրված դեպքերից մեկը ցույց է տալիս, թե ինչպես է ատելության խոսքի խրախուսումը և դրա տարածումը գործիք դառնում քաղաքական ամբոխահաճո առաջնորդների համար՝ դեմոնիզացնելու հասարակական որոշ խմբերի, այդ թվում՝ լրագրողների (Ullmann & Tomalin 2019), իսկ տվյալ ուսումնասիրության դեպքում՝ քաղաքական հակառակորդների: Պոպուլիստական մոտեցումներով քաղաքական ղեկավարների կողմից ատելության խոսքի կիրառումը հիմնականում ոչ այնքան գեներացնում է խտրական կարծրատիպեր, մասնավորապես, երբ կանանց նկատմամբ ատելության խոսքին է վերաբերում, որքան կիրառվում է որպես գործիք քաղաքական նպատակներին հասնելու համար՝ հիմնվելով արդեն առկա կարծրատիպերի և խտրական վերաբերմունքի վրա (Husso et al. 2020, Waisbord 2020): Նշված պնդումները հիմնականում վերաբերում են աջակողմյան քաղաքական հայացքներ ունեցող քաղաքական ղեկավարների վերաբերյալ հետազոտությունների արդյունքներին, ինչը լիարժեք կիրառելի է հայաստանյան հասարակության պարագայում՝ հաշվի առնելով վերջին տարիների իրար հակադիր քաղաքական ուժերի կիրառած մոտեցումներն ու գործիքները թե՛ քաղաքական պայքարի տեսանկյունից, և թե՛ ամբոխահաճո, հանրային համակրանքի և թողտվության դիրքերից որոշումների ընդունման ավանդույթի տեսանկյունից (Nikoghosyan & Ter-Matevosyan 2022, Sukiasyan 2024):

Քաղաքական հակառակորդները միմյանց նկատմամբ ակնհայտորեն կիրառում են խտրական, կարծրատիպային, հասարակական որոշակի խմբերի և մարդկային հատկանիշներ թիրախավորող բառապաշար, որն արագ կրնկնօրինակվում է և ավելի մեծ մասշտաբներով կիրառվում սոցցանցերում, հայտնվում օգտատերերի գրառումներում, նրանց թողած մեկնաբանություններում և այլուր:

Կարգավորումներ և կանխարգելիչ միջոցներ

Կին հանրային գործիչներին ուղղված առցանց ատելության խոսքը բազմակողմանի լուծումներ և երկարաժամկետ աշխատանք պահանջող խնդիր է: Այն հաղթահարված չէ նույնիսկ այն երկրներում, որտեղ դրա դեմ պայքարն ավելի քան երկու տասնամյակ է, ինչ ընթանում է: Ատելության խոսքի շուրջ կարգավորումների վերաբերյալ քննարկումները հիմնականում ընթանում են խոսքի ազատության և մարդու արժանապատվության պաշտպանության երկրնտրանքի համատեքստում, հետևաբար առկա լուծումները ոչ միայն իրավական, այլև էթիկական կարգավորումների տիրույթում են: Այս երևույթին անհրաժեշտ է արձագանքել մի քանի մակարդակներով՝ անհատական, ինստիտուցիոնալ և հասարակական (Waisbord 2020): Առաջարկվող հիմնական տարբերակները նույն երեք ոլորտներին են վերաբերում՝ ներառելով **քաղիասարակության գործունեությունը, հասարակական կազմակերպությունների դերն** իրազեկման, կրթական բաղադրիչներով, որոնք կարող են իրագործվել երկարատև արշավների, թեմայի մշտական բարձրաձայնման ճանապարհով:

Մասնավոր կազմակերպությունների հետ աշխատանքը ենթադրում է լրբբիստական աշխատանք և արշավներ հատկապես ատելության տրամադրությունների դրդող կամ դրանք խրախուսող բովանդակությամբ գովազդներ տեղադրող կազմակերպությունների դեմ: Այստեղ կարելի է ներառել նաև ինտերնետային ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ աշխատանքը՝ ուղղված իրենց հարթակներում ատելության խոսքի սահմանափակմանը: Ինստիտուցիոնալ լուծումները ներառում են օրենսդրական նախագծերի, էթիկական նորմերի մշակումը, ինչպես նաև կրթության միջոցով քննադատական մտածողության խրախուսումը՝ որպես գործիք ատելության խոսքի դեմ պայքարի գործում (Gagliardone et al., 2015):

Տվյալ հետազոտությունը երկու հիմնական փուլերից բաղկացած ուսումնասիրություն է, որը հիմնված է թե՛ որակական, և թե՛ քանակական մոտեցումների վրա: **Հիմնական նյութը**, որի վրա կառուցված է հետազոտությունը, Facebook (այսուհետ՝ Ֆեյսբուք) և YouTube (այսուհետ՝ ՅուԹյուբ) սոցիալական հարթակներում, հայաստանյան լրատվամիջոցների կողմից հրապարակած գրառումների ներքո, ատելության խոսք պարունակող մեկնաբանություններն են՝ ուղղված հասարակական և քաղաքական գործունեություն իրականացնող կանանց: Սոցիալական այս հարթակների ընտրությունը պայմանավորված է դրանց ժողովրդականությամբ և սոցիալական ամենաբազմազան շերտեր ընդգրկելու գործոնով: Հետազոտական նյութի հավաքագրման համար դիտարկվել են միայն Ֆեյսբուք և ՅուԹյուբ հարթակները, չնայած Հայաստանի մեդիասպառողներն ակտիվորեն օգտվում են նաև այլ սոցիալական հարթակներից, ինչպես օրինակ՝ Ինստագրամ, Տելեգրամ, Տիկտոկ: Ընտրությունը պայմանավորված է Հայաստանում նշված հարթակներում քաղաքական թեմաների ընդգրկվածությամբ և առհասարակ թեմաների բազմազանությամբ: Ոչ պակաս կարևոր է նաև այս հարթակներում սոցիալական տարբեր շերտերի ընդգրկվածությունը: Ընդգրկունության և բազմազանության բաղադրիչները կարևոր են ոչ միայն ատելության խոսքի բացահայտման տեսանկյունից, այլ նաև ատելության խոսքի տեսանելիության պատճառով: Անկախ մեկնաբանություններ կարդալու օգտատիրոջ սովորություններից, մեդիասպառողների զգալի մասը նպատակաուղղված կամ, պարզապես թերթելով նորությունների ժապավենը, կարդում կամ աչքի է անցկացնում հրապարակման մեկնաբանությունները: Տեսանելիության գործոնն ավելի վտանգավոր է դարձնում ատելության խոսքի վնասակար հետևանքների խնդիրը: Այն ուժգնացնում է վնասի չափը թե՛ թիրախավորված անձին հոգեբանորեն խոցելու, թե՛ հասարակության մեջ ֆիզիկական և վերբալ բռնությունը լեգիտիմացնելու տեսանկյունից:

Հայաստանի մեդիասպառողների զգալի մասը, եթե հեռուստացույց կամ ռադիո չի օգտագործում լուրերին ծանոթանալու համար, ապա առցանց հեռարձակվող լրահոսից նախընտրում է Ֆեյսբուք կամ ՅուԹյուբ սոցիալական հարթակների միջոցով տրամադրվող նյութերը, այն է՝ հայաստանյան առցանց մեդիայի արտադրած բովանդակությունը (Internews 2023¹): Դիտողների աննշան քանակությունն է նախընտրում հետևել կոնկրետ մեդիայի կայքէջին, փոխարենը հետևում են նախընտրած մեդիայի ֆեյսբուքյան կամ յուԹյուբյան էջերին, որոնք ավտոմատ կերպով ֆիլտրում և տեսանելի են դարձնում յուրաքանչյուրի հետաքրքրություններին համապատասխան լրահոս:

Ըստ Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման վերաբերյալ հետազոտության տվյալների՝ մեդիասպառողների 59%-ը տեղեկատվություն ստանում է սոցիալական ցանցերի միջոցով, 2023 թվականին առցանց լրատվություն ստացողներից միայն 12 տոկոսն է նշել, որ լրատվական կայքերի

¹ Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն, Ինտերնյուսը Հայաստանում, 2023, <https://media.am/hy/lab/2023/11/14/36724/>

միջոցով է հետևում լրահոսին, 88%-ը հետևել են սոցիալական ցանցերի միջոցով (Internews 2023 ²): Այս տվյալները վկայում են լրատվական մեդիաների՝ սոցիալական հարթակներում բարձր տեսանելիության մասին:

Հետազոտության **երկրորդ փուլում** իրականացվել են 2 ֆոկուսխմբային քննարկում և 2 խորին հարցազրույց առանցքային տեղեկատուների հետ: Մասնակիցները մեդիա ոլորտի և քաղաքացիական ներկայացուցիչներ են, ովքեր կամ մասնագիտության/աշխատանքի բերումով առնչվում են առցանց ատելության խոսքի դեմ պայքարին, կամ իրենք՝ որպես քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ կամ լրագրողներ, թիրախավորվել/թիրախավորվում են որպես հանրային գործունեություն ծավալող կանայք:

Դաշտային նյութի հավաքագրման ընտրանքի սկզբունքներ և գործիքներ

Կին քաղաքական և հասարակական դերակատարների՝ նախապես կազմված անվանացուցակից Crowdtangle-ի միջոցով Ֆեյսբուքյան 38 լրատվական էջերից դուրս են բերվել 2021, 2022 և 2023 թվականներին հրապարակված թվով 3553 հանրային հրապարակում, որոնցից առանձնացվել են առավել քննարկվածները՝ հիմք ընդունելով մեկնաբանությունների քանակը՝ որպես ցուցանիշ ընտրելով երեք հարյուրից ավելի մեկնաբանություն ունեցող հրապարակումները: Նշված ժամանակային սահմանները ֆիքսված են երևույթի արդիականության և հետազոտության ծավալային իրագործելիության սկզբունքից ելնելով: Կին հասարակական և քաղաքական դերակատարների անվանացանկը լրացվել է՝ հիմք ընդունելով նրանց հանրայնությունն ու զբաղեցրած պաշտոնը: Ներառվել են Ազգային Ժողովի բոլոր կին պատգամավորները, բոլոր կին նախարարները և հանրային հասարակական գործունեություն ծավալող, քաղաքական դիրքորոշումներ արտահայտող կանայք, այդ թվում՝ նաև քաղաքացիական հասարակության դաշտում ակտիվ գործող և հանրային գործունեություն իրականացնող կին դերակատարները: 300-ն անց մեկնաբանությունների ֆիլտրը թույլ է տվել ընտրանքում ունենալ մեկնաբանությունների քանակի տեսանկյունից ամենաքննարկվող հրապարակումները: Այնուհետև, դուրս են բերվել միևնույն լրատվամիջոցների ընտրանքում գտնվող հրապարակումների վիդեոբովանդակությունները յուրաքանչյուր ակիբներից:

Նյութի վերլուծության մեթոդներ և գործիքներ

Այս չափանիշներով ստացված հրապարակումները թվով 138 են: Այս բոլոր հրապարակումների ներքո գտնվող մեկնաբանությունները դիտարկվել են հետազոտական թիմի անդամների կողմից՝ հաշվի առնելով առավել ռելևանտ/առնչյալ և առավել շատ արձագանքներ ստացածները: Դուրս են բերվել այն մեկնաբանությունները, որոնք ատելության բաղադրիչ են պարունակել: Յուրաքանչյուր հրապարակման մեկնաբանություններից դուրս է բերվել առավելագույնը տասը մեկնաբանություն: Այս մեկնաբանությունների ընդհանուր

² Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն, Ինտերնյուսը Հայաստանում, 2023, <https://media.am/hy/lab/2023/11/14/36724/>

թիվը 1519 Է: Ստացված տվյալների մշակման հաջորդ փուլում յուրաքանչյուր բաղադրիչ (բաղադրիչ=data item=մեկնաբանություն) կողավորվել է ըստ ատելության խոսքի բնույթի, հիմքի և թեմայի: Դիտարկվել են նաև մեկնաբանության ստացած արձագանքները՝ հասկանալու համար, թե տվյալ բովանդակության խոսքն ինչպիսի աջակցության կամ դիմադրության է արժանանում մեդիասպառողների կողմից:

Յետազոտության հիմնական բացահայտումները


Երեք հարյուրից ավելի մեկնաբանություն ունեցող հրապարակումները թվով 138-ն են, որոնց վերնագրերում եղել են կին հասարակական և քաղաքական դերակատարների նախապես կազմված ցանկից անուններ: Այս ցանկում, ըստ հրապարակումների քանակի, հայտնվել են հանրային մեծ ճանաչում ունեցող անձինք, որոնց գործունեությունը համեմատաբար ավելի շատ է լուսաբանվում և քննարկվում: Նշված անձինք են՝ ՀՀ առողջապահության նախարար (Անահիտ Ավանեսյան-30), Վարչապետի տիկին (Աննա Հակոբյան-22), Ազգային ժողովի պատգամավոր (Թագուհի Թովմասյան-17), ՀՀ արդարադատության նախկին նախարար (Արփինե Հովհաննիսյան-13), Ազգային ժողովի պատգամավոր (Լենա Նազարյան-13), Ազգային ժողովի պատգամավոր (Աննա Գրիգորյան-12), Ազգային ժողովի պատգամավոր (Լուսինե Բադալյան-10), երգիչ և Ազգային ժողովի նախկին պատգամավոր (Շուշան Պետրոսյան-6), դերասան (Նազենի Հովհաննիսյան-4), ԱՄՆ-ում ՀՀ դեսպան և ՀՀ մշակույթի նախկին նախարար (Լիլիթ Մակունց-3), Ազգային ժողովի պատգամավոր (Մարիա Կարապետյան-2), ԿԳՄՍ նախարար (Ժաննա Անդրեասյան-1), Ազգային ժողովի պատգամավոր (Հերիքնազ Տիգրանյան-1), Ազգային ժողովի պատգամավոր (Աննա Մկրտչյան-1):

Բացահայտում 1.

Քաղաքական համատեքստի փոխկապակցվածություն

Երկրի քաղաքական իրավիճակը մեծապես պայմանավորում է օգտատերերի ակտիվությունը և կիրառած բառապաշարը՝ մեծացնելով առցանց քննարկումների ծավալը, զուգահեռ նաև շրջանառվող ատելության չափաբաժինը: Ընդ որում, քաղաքական թեմաներով գրառումների մեկնաբանությունների բաժնում ակտիվությունը ցուցանիշ է ատելության խոսքի նշանակալի առկայության: Այս համատեքստում պետք է ընդգծել, որ ամենամեծ մասշտաբներով, օգտատերերի ներգրավվածության քանակով, թիրախավորվում են քաղաքական պաշտոններ զբաղեցնող, կուսակցական և քաղաքական դիրքորոշումներ ունեցող, հանրության համար ճանաչելի կանայք:

300+ մեկնաբանություն և քաղաքական-սոցիալական դերակատրում ունեցող կանանց անունները պարունակող հրապարակումների ինտենսիվությունն ըստ ամիսների



Պատերազմին հաջորդած տարվա (2021թ.) ընթացքում փողոցային պայքարի, ընտրական գործընթացների ֆոնին (20 հունիսի 2021թ.) գրանցվել են ամենից շատ ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները, մինչդեռ հաջորդող երկու տարիների (2022-2023թթ.) ընթացքում նման ակտիվությունը և օգտագործված նվաստացնող բառապաշարն աստիճանաբար թուլանում է:

«Այ խիյարներ, ռադ եղեք փողոցներից և գնացեք Արցախ, ցույցեր կազմակերպեք ձեր ղեկավարության հետ միասին ու պահանջեք անկախության ճանաչում, քանի դեռ ռուսները այնտեղ են, այլ ոչ թե պահանջեք Հայաստանում վարչապետի հրաժարականը: Դա մեր ներքին գործն է: Դուք ուրիշ ավելի հրատապ հարցերի լուծման կարիք ունեք»:

Մարտի 5, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 10 հավանում (like) մեկնաբանությանը

«Բարեբախտավոր ձեզ էլ չենք տեսնի հաջորդ ընտրություններին, հատկապես քեզ 🙄 Մեռնի էն երկիրը, որ քո նման քաղաքական գործիչ պետք է ունենա ու ղեկավարի, լավ էլ ասեցիր, որ քաղաքականություն չկարողացաք ունենալ, որի արդյունքում տեղի ունեցավ պատերազմ: Դու ու քո նմանները ԱԺ-ի աթոռի ոտքից կախված եք ու չեք ազատում մեզ ձեր ներկայությունից: Զգվելի եք»:

Յունվարի 15, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 6 հավանում մեկնաբանությանը

«Թուրքական սերիալներով սնված ու հիացած էս էժանագին պոռնիկը իր սեռական պոռնկությունը չբացահայտելու վախից պատրաստ է դիմել ցանկացած քաղաքական պոռնկության»:

Մարտի 5, 2021, ուղղված Մարտի 5, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 5 հավանում մեկնաբանությանը

«Այ քոռ թալանչի, լռի, տեսար, որ քեզ շպոտեցին բոլոր տեղերից դու քաղաքական մաշված տրյակակա ես»:

Յունվարի 17, 2021, ուղղված ԱԺ նախկին պատգամավոր և նախկին նախարարի, 46 հավանում, 2 սեր (love) մեկնաբանությանը

Մեկնաբանությունների քանակի (սվազագույնը՝ 300 մեկնաբանություն) ֆիլտրով անցած գրառումներից միայն 135-ում է (135/138 գրառում կամ ընդհանուր գրառումների 97.82%-ը) տասից ավելի շատ ատելության խոսքի բաղադրիչով մեկնաբանություն եղել: Այս տվյալը ցույց է տալիս, որ եթե առկա են մեծ թվով մեկնաբանություններ, ապա միանշանակ այնտեղ կա վիրավորանք, նվաստացում, ատելություն արտահայտող խոսք:

Ատելության խոսքի ամենամեծ բաժինը քաղաքական թեմաներով հրապարակումների շուրջ են, անկախ նրանից՝ թիրախավորված անձը քաղաքական գործիչ է, թե՛ ոչ: Այն անձինք, որոնք մշակույթի և արվեստի ոլորտից են, բայց քաղաքական դիրքորոշում են արտահայտում, թիրախավորվում են դարձյալ քաղաքական հայացքների համար, ավելին, իրենց ոլորտին վերաբերող հրապարակումների մեկնաբանությունների բաժնում առկա ատելության խոսքը նույնպես վերաբերում է իրենց քաղաքական դիրքորոշմանը:

«Նազելի ինչել գեշ անունեն դրել այս համաշխարհային կենդանու անունը այ լիրբ դու քո կյանքը մի չափի միշուլիկի հետ այ լիրբ բոլոր ազգի դավաճաներնել վախկոտ և ազգուրացեն դու սկսի կապնվել մեր հայ իսկականից մաքրաայրուն ֆիդայիների հետ գնա առաջնագիծ և կտեսնես իսկական երկրի ճակատագրով տառապող տղեքին և դու կբերես իսկական հայ բալիկ այ սուտ քաղաքական պոռնիկուհի»:

Սեպտեմբերի 3, 2021, ուղղված դեսրասան-հաղորդավարի, 0 արձագանք մեկնաբանությանը


Բացահայտում 2.

Անտելության խոսքի կապը հրապարակման բովանդակությանը

Մեկնաբանությունների զգալի մասն արձագանք է մեդիայի ընտրած վերնագրին, այլ ոչ լյուծի բովանդակությանը, որտեղ հրապարակումների ներքո թողնված մեկնաբանությունները մեծ քանակով հավանումներ (like) են ստանում, եթե դրանք փաթեթավորված են որպես «սրամիտ» ու «հումորային» արտահայտություններ (հիմնականում խտրական և կարծրատիպային), սուր քննադատություններ են ուղղված տվյալ անձին կամ նրա հնչեցրած մտքին: Մինչդեռ հայիտյանքներն (հատկապես՝ սեռական բնույթի) ու բռնության կոչերն անհամեմատ ավելի քիչ հավանումներ են ստանում:

Հրապարակումների համար մեդիայի ընտրած վերնագրերն ամենից հաճախ հատվածներ են որևէ ելույթից կամ հարցազրույցից, որոնք հնարավորինս սուր, սկզբունքային և համարձակ ձևակերպումներ են և հարուցում են մեդիասպառողների զայրույթը, հակակրանքը կամ համակրանքն ու հիացմունքը: Արձագանքների քանակն ավելի տեսանելի է դարձնում նմանօրինակ հրապարակումները, որտեղ ձևագրի էֆեկտով բազմապատկվում են քաղաքական հակառակորդների համակիրների փոխադարձ քննադատությունները կամ պարզապես հայիտյանքի, նողկանքի, թշնամանքի արտահայտությունները: Այս փաստարկը հիմնավորում է նաև մեկնաբանության և հրապարակման թեմաների տարբերությունը: Մեկնաբանությունների 86 տոկոսում դրանք չեն համընկնում, քանի որ օգտատերերը մեկնաբանել են վերնագրին կամ պարզապես ո՛չ լյուծի, ո՛չ վերնագրի հետ կապ չունեցող, բացասական բնույթի վիրավորանքներ են գրել:

Հրապարակման և դրա տակ թողնված մեկնաբանության բովանդակային համապատասխանությունը միմյանց



Անտելության խոսքի չափաբաժինն ակնհայտորեն ավելի մեծ է նմանօրինակ վերնագրերի դեպքում.

«Մեր հայրենիքի կեսը կորցրել ենք, այս իշխանությունը պիտի պատժվի դրա համար. Թագուհի Թովմասյան»:

Փետրվարի 2, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 357 մեկնաբանություն

«Ովքեր աջակցում են այսօրվա իշխանությանը, մասնակից են երեխեքի կոտորածին. Շուշան Պետրոսյան (տեսանյութ)»:

Փետրվարի 16, 2021, ուղղված երգչուհու, ԱԺ նախկին պատգամավորի, 343 մեկնաբանություն

«Ինչու որեւէ մեկը համարում էր, որ սույն քաղաքական դիակը կարող էր գերիների հարց լուծել. Արփինե Հովհաննիսյան»:


Հունվարի 11, 2021, ուղղված նախկին նախարարի, 324 մեկնաբանություն

«Կոչ կանեի ինքնասպան լինեիր. Արփինե Հովհաննիսյան»:

Մարտի 2, 2021, ուղղված նախկին նախարարի, 351 մեկնաբանություն

Այս գրառումներին ի պատասխան՝ թողնվել են տասնյակ մեկնաբանություններ, որոնք արձագանք են որպես վերնագիր ընտրված ձևակերպմանը կամ մեջբերմանը՝ ոչ մի հիշատակում չունենալով ընդհանուր նյութի բովանդակությանը:

Հրապարակումների և մեկնաբանությունների թեմատիկ ուղղությունները



«Կոչ կանեի դու ազառկա ինքնասպան լինեիր քանցչե եղքան մարդու տակ պարկեիր հետո առնեիր մի շլանգի ովայ կխնդրենք թող քո կադրերն ցույց տա էշիդ պոռնիկ պռաստիտուտկա թույլ խմի վերացի ամոթա ամոթ»:

Մարտի 2, 2021, ուղղված նախկին նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

«դու թուրք թալանչի, դավաճան, անբարո, փողցային ես»:

Մարտի 2, 2021, ուղղված նախկին նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

«tox mardt iknaspan lini kez pes lrbiz przni»:


Մարտի 2, 2021, ուղղված նախկին նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

«Այ լիրբ, բա դու ինչու՞ ինքնասպան չես լինում, չէ-ո՞ր բոլոր հիմքերը կան դրա համար»:

Մարտի 2, 2021, ուղղված նախկին նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

Իսկ արդեն մեկնաբանության ժողովրդականությունը և ստացած աջակցությունը տեսանելի է հավանումների քանակով: Եթե այլ արձագանքներ (Սեր, Կարեկցանք, Հարհա՛, Օհո՛, Տխուր, Ձայրացած) հնարավոր չէ միանշանակ մեկնաբանել, ապա «Հավանում» արձագանքի դեպքում հնարավոր է առավելագույն ճշգրտությամբ մեկնաբանել որպես աջակցություն տվյալ մեկնաբանությանը: Արձագանքների ինտենսիվության օրինաչափությունը ցույց է տալիս, որ մեծ մասամբ անարձագանք են մնում սեռական բնույթի հայիոյանքները և այլ անպարկեշտ արտահայտությունները, որոնք ընդունված չէ հասարակայնորեն կիրառել: Հետաքրքրական է, որ առավել մեծ թվով հավանումներ են ստանում այն մեկնաբանությունները, որոնք, չնայած իրենց խտրական և թշնամական բնույթի, «հումորային» և «զվարճալի» են ձևակերպված:

Մեկնաբանության արձագանքները



«2500 կիլոմետրի ամեն մետրը մեկ ծծցնեմ քեզ ու նիկոլիտ իրար վրա դրած այ գանդոնի ձագ»:

Յունիսի 14, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 1 հավանում մեկնաբանությանը

«Տո դանդալոշ, ինչի համար է թավալել գետնին, որ հետո ոտքով էլ հարվածեն: Դրա նման անտերներին, որոնք ոչ հայր ունեն, ոչ մայր ունեն, ոչ եղբայր ունեն (եթե ունենային փողոցներում չեին թափառի) խառնվել էն իր նմաններին և տեղին անտեղին պառկում են ասֆալտին»:

Յունիսի 4, 2022, ուղղված ԱԺ պատգամավորի, 4 հավանում մեկնաբանությանը

«Քե՛զ որ մի տղամարդկային վեհ հատկանիշներով տղամարդը կառնի որ դու էլ քե՛զ գին ես դնում դիշովկա: Մի հազար կռուգ քշվի ու քո ասած վախկոտ քիքիր ղզզիկ կոտոշավորիտ գտի»:

Սեպտեմբերի 3, 2021, ուղղված կին դերասանի, 7 հավանում, 1 սեր մեկնաբանությանը

**Բացահայտում 4.
Ատելության խոսքի հիմքը գենդերով**

Յետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրային գործունեություն ծավալող կանանց թիրախավորման շուրջ 42 տոկոսը գենդերային հիմքով ատելության խոսք է, որտեղ շահարկվում, քննադատվում և ծաղրի են ենթարկվում կնոջ այնպիսի հատկանիշներ, որոնք կապված են կնոջ կերպարի կամ դերի հանրային կարծրատիպային ընկալումների հետ: Պետք է նշել, որ հայաստանյան մեդիայում գենդերի հիմքով ատելության խոսքն ուղղակիորեն չի թիրախավորում կանանց՝ որպես սոցիալական խումբ: Փոխարենը, առկա ատելության խոսքը թիրախավորում է առանձին կանանց և հիմնված է գենդերային դերի ընկալման և դրանից բխող կարծրատիպերի վրա՝ անուղղակի կերպով առանձնացնելով, ստորադասելով կանանց՝ որպես գենդերային խումբ:

Գենդերի հիմքով ատելության խոսքը գերակշռում է հավաքագրված տվյալներում: Այն հիմնականում ծաղր, նվաստացում կամ կոշտ քննադատություն է թիրախավորված անձի կանացի հատկանիշներին: Այս թվում են սեռական բնույթի հայիոյանքները և վերբալ սեռական բնույթի բռնի գործողությունների կոչը կամ նկարագրությունը, որոնք գերակշիռ մեծամասնությունում կիրառվում են միայն կանանց նկատմամբ: Քննարկվում են թիրախավորված անձի՝ կնոջ դերին ու ընդունված վարքագծին չհամապատասխանելու մասին դիտարկումները, դիտողությունները և այլն:

«Ես երջանիկ էլը ոնցա քիթը տնկած պահում իրեն: Այ լրբի ծնունդ քո համար ինչ տարբերություն թե քեզի ովա տանում դոմփի , մեկա դու բոլորկ հետ ել կլկստվես վերջում ել վրից կթռնես»:

Մայիսի 3, 2021 ուղղված ԱԺ պատգամավորի, 17 հավանում մեկնաբանությանը

«ԷՍ ԹԻԹԵՌ ԹԼԹՈՇԸ, ՈՐ ԳՐԿԻՑ ԳԻՐԿ Է ԹՈՆՈՒՄ ՆԱՌԱՅԻՆ ՏՎԵՑ ԱՆՑԱՎ: (ՄՈՐՔՈՒՐԸ) ԿԱՐՈՂ Է ԴՐԱՆ ԼՈՒՅՆԻ, ԹԷ ԲԵՐԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԹԻՄ, ՈՐ ԱՄԲԱՂ ԶԱՄԲԱՂ ԽՈՍՈՂ ԼԻՆԻ»:

Յունիսի 3, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 137 հավանում, 2 սեր մեկնաբանությանը

Կանանց վերագրվող գենդերային դերերը, որոնք ընդունված են համարել ընտանիքի մասին հոգ տանելը, ընտանեկան պարտականություններ կատարելը, հակադրվում է հանրային գործունեությանն ու այդ գործունեության տեսանկյունից ակտիվ լուսաբանմանը: Այս կերպ ատելության խոսք տարածողները ոչ միայն վնաս են հասցնում տվյալ հանրային գործունեություն ծավալող կնոջը, այլ նպաստում են կնոջ գենդերային դերի պարզունակացմանն ու սահմանափակմանը՝ եզերելով կնոջ կերպարը և ինքնությունը նրա գենդերային որոշակի դերերով:

«Տուն չունես ուր գնաս երեվի մի հատ էշ ավանակ մարդ ունես են էլ քեզ էշի տեղ չի դնում»:

Ապրիլի 20, 2022, ուղղված ԱԺ պատգամավորի, 0 արձագանք մեկնաբանությանը

«Arpine amusind inchov e zbxavac gone tirtyun ani ir anbaro tiknoj@»:

Փետրվարի 28, 2021, ուղղված Նախկին Նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

Բացահայտում 5. Ատելության խոսքի հիմքերը

Գենդերային հիմքով ատելության խոսքը պարբերաբար արտահայտվում է թիրախում ունենալով անհատի արտաքին տվյալները և/կամ ֆիզիկական/հոգեկան առողջությանը վերագրվող խնդիրները: Այս երևույթը միտված է անհատի մարզինալացմանը, ինչպես նաև տվյալ անձի նկատմամբ վստահության իջեցմանը՝ նրա խոսքը կամ գործը վերագրելով հոգեկան/հոգեբանական խնդիրների՝ դրանով անհամարժեք, անվստահելի, անկանխատեսելի և վտանգավոր ներկայացնելով նրան հանրության առաջ:

Արտաքին տվյալների հիմքով ատելության խոսքը կազմում է դիտարկված տվյալների 14 տոկոսը՝ երրորդ ամենից հաճախ հանդիպող հիմքը: Առաջին հայացքից անտրամաբանական այս թիրախավորումը նույնպես հիմքում պարունակում է գենդերային դերի վերաբերյալ կարծրատիպեր: Թեև հանրային գործունեության տեսանկյունից մարդու արտաքին տեսքը որևէ որոշիչ դեր չունի, այն քննադատելն անձին արժեզրկելու փորձ է՝ ցույց տալով, որ վերջինս չունի իր ինքնության հիմնական՝ գենդերային բաղադրիչին բնորոշ հատկանիշներ, «գեղեցիկ» կնոջ կերպարին չի համապատասխանում:

«Վայ դողոշ շատ վախենալու ես գորիլային շատ նմանես»:

Փետրվարի 16, 2021, ուղղված ԱԺ Նախկին պատգամավորի, 0 արձագանք մեկնաբանությանը

«Էդքան վիրահատվել էս, որ ծայրահեղ գեշից դառնաս բավարար գեշ անդուր գառշելյան»:

Յունիսի 3, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 1 հավանում մեկնաբանությանը

«Անամոթ անբարո կով՝ ուղեղով և դեմքով»:

Յուլիսի 28, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 3 հավանում մեկնաբանությանը

Այս երևույթը տեղ-տեղ համադրվում է նաև հաշմանդամության հիմքով ատելության խոսքի հետ, ինչը նույնպես թիրախավորում է վիզուալ ֆիզիկական տվյալները, անձին վերագրվող առկա կամ ենթադրյալ առողջական խնդիրները:

«Տո այ քոռ պշպուր ր քեզ կոնկրետ պահի սանձարձակ մարդասպան հաց բերողին սպանող դու պտի սև քող քաշես երեսիդ ենքան անեցք կա վրեղ որ չես մայրանա երեխայի ճիչ սաղ կյանք չպետք էլսես սա իմ ցանկությունը հարազատիսհաց բերողի կողմից»:

Փետրվարի 28, 2021, ուղղված նախկին նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

Առկա կամ ենթադրյալ առողջական տվյալների հիշատակմանը զուգահեռ կանանց վերագրում են նաև հոգեկան առողջության ոլորտի խնդիրներ: «Յոգեկան հիվանդ», «հիվանդ», «գիժ», «խելքից պակաս», «ծալապակաս» և այլ ածականներն ակնարկում են թիրախավորված անձի՝ իրավիճակին չտիրապետելու, իրերը չընկալելու մասին, ինչն արժեզրկում է տվյալ անձի խոսքը և առհասարակ գործունեությունը: Վերջնական նպատակն անձին մարգինալացնելն ու ոլորտից դուրս թողնելն է: Նման օրինակներ են տեսողության, մարմնի քաշի հետ կապված խնդիրները, որոնք վիզուալ տեսանելի են: Որոշ դեպքերում անձին վերագրում են որոշ վարակիչ հիվանդություններ (հատկապես՝ սեռական ճանապարհով փոխանցվող), ինչպես նաև հոգեկան առողջության հիվանդություններ, որոնք ապահովում են մարգինալացում, հեղինակազրկում և արժեզրկում:

«Արա հո դու ուղեղից մինինգիտ չես՞ դու պիտի որոշես ես ինչքան աղ օգտագործեմ՞ մենակ շասես մեր առողջության մասին մեզնից շատ ես մտածում»:

Մարտի 10, 2022, ուղղված նախարարի, 5 հավանում մեկնաբանությանը

«Այ ագռավ կարողա մի օր էլ մրփես արթնանաս, որոշես որ շաքարավազ պիտի բոլորովին չօգտագործենք, աթոռի մեռած հոգեկան»:

Մարտի 12, 2022, ուղղված նախարարի, 9 հավանում մեկնաբանությանը

«Բայց իրոք ինչքան դաուն եք»:

Մարտի 4, 2021, ուղղված նախարարի, 7 հավանում մեկնաբանությանը

Բացահայտում 6.

Ատելության խոսքով օտարումն ու բաժանումը

Ազգային, կրոնական պատկանելիության/համոզմունքի հիմքով ատելության խոսքը չի թիրախավորում կանանց «իրական» պատկանելիությունը տվյալ ազգային կամ կրոնական խմբին, փոխարենն այդ պատկանելիությունը

վերագրվում է տվյալ անձանց՝ նրանց օտար, համայնքից դուրս և վտանգավոր ներկայացնելու համար: Այն պարունակում է թշնամանք և դիրքավորում «բարիկադների» մյուս կողմում որպես հակառակորդ, որտեղ խիստ կերպով արտահայտվում է «մաքուր»-ին, «սուրբ»-ին, «քրիստոնյա»-ին, «խղճով»-ին հակադրվող «պիղծը», «սրբապիղծը», «խղճին դեմ գնացողը», իսկ «սատանա», «աղանդավոր» և «կախարդ» բառերով մատնանշվում է թշնամությունն ու հակառակորդի գաղափարը, որտեղ գերակշռում է «մենք» և «նրանք»-ի տարանջատում ինքնության երկու հիմնական բաղադրիչների կիրառմամբ՝ ազգային (թշնամու կամ հայրենիքի շահը սպասարկող) և արժեհամակարգի (բարոյական սկզբունքներ կիսողներ և չկիսողներ) դաշտում:

Անկախ նրանից, որ թիրախավորումն անուղղակի է, որակումներն ակնհայտորեն չեն վերաբերում անձի իրական ազգային կամ կրոնական ինքնությանը, այլ ինքնության տվյալ բաղադրիչներն օգտագործում են անհատին վիրավորելու, խմբից դուրս թողնելու նպատակով: Միևնույն է այս արտահայտություններն իրենց բնույթով խտրական են, քանի որ ընթերցողին կանխատրամադրում են, որ որոշակի ազգեր և կրոնական խմբերի անդամներն իրենց դեմ են, թշնամի են, վտանգավոր են կամ իրենցից ավելի ցածր են դասվում: Ազգային հիմքով ատելության խոսքը նշված մեկնաբանություններում երկու դրսևորում ունի՝ կամ ներկայացնել որպես թշնամական համարվող ազգի ներկայացուցիչ, կամ գրառումը կատարողի կողմից ստորադասվող ազգի ներկայացուցիչ (հատկապես նկատի ունենալով տվյալ ազգին վերագրվող հագուստի և կենսակերպի առանձնահատկություններ): Առաջինում շահարկվում են «թուրք» և «ադրբեջանցի» եթնոնիմները, իսկ երկրորդ պարագայում՝ «բոշա» եթնոնիմը: Չարկ է նշել, որ «բոշա» անվան եթնոնիմ լինելը հիմնականում գիտակցված չէ, բառն օգտագործողները հազվադեպ են տեղեկացված լինում, որ այդպիսի եթնիկ խումբ գոյություն ունի, փոխարենը կիրառում են որպես ածական որոշակի հագուստի ոճի, կենսակերպի վերաբերյալ:

«Թուրքից խնդրի ներողություն, այ դավաճան բոշա»:

Յունիսի 3, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 2 հավանում մեկնաբանությանը

«Աստղծոն ահեղ դադաստանին պարտյալ մնաս անհավատ պոռնիկ թուրքի լամուկ անիծված լինի քո ամբողջ ընտանիքը»:

Նոյեմբերի 18, 2021, ուղղված վարչապետի տիկնոջը, 4 հավանում մեկնաբանությանը

«Դու ընդանրապես մի խոսիր երեխաներից այ թուրքի վաստակ քո ու թուրք ընտանիքի ոչ ու փուչ եղած ամուսնուդ խաղերի հետևանքնա ուղղակի Աստծուց մի բան եմ խնդրում որ դատավճիռ կայացնի նրանց առաջ ով մեղավորա եսքան կորստի ու ցավի համար դու էլ զգաս այն ցավ որ ապրում է զոհվածի ծնողը դու զգաս այն ցավը ինչ այսօր զգում է Արցախ աշխհարում ապրող յուրաքանչյուր արցախցի ոչինչ մի օր գալու է Աստծո դատաստանը տեսնենք ետ ժամանակ ուր եք փախչելու դավաճաններ անիծում եմ ձեզ ամբողջ Արցախ աշխհարում ապրող ժողովրդի անունից»:

Դեկտեմբերի 25, 2022, ուղղված վարչապետի տիկնոջը, 19 հավանում, 5 սեր, 2 հոգատարություն մեկնաբանությանը

Անձին այլ կրոնական պատկանելիություն և համոզմունքներ վերագրելը նրա նկատմամբ թշնամական վերաբերմունք ձևավորելու գործիքներից է: Հիմնականում քննարկվում են Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների հետ առնչությունները՝ անվանելով նրանց «աղանդավորներ»: այս եզրույթի ենթատեքստը հիմնականում ընդունված է զուգորդել միջազգային ուժերի կողմից Հայաստանում կրոնականի քողի տակ պառակտիչ գործունեություն ծավալող խմբերի հետ:

«Ի՞նչ իմացար, տիկին աղանդավոր, մտքներինդ ասեք, նիկոլ չեղածը էլ ի՞նչ ԹԱՔՈՒՆ ծրագրեր ունի մեր դեմ , Հայրենիքիս առուծախը դեռ լրիվ վերջացրել, արդեն հող եք նախապատրաստում , որ նորից տներում փակե՞ք մարդկանց...»:

Մարտի 4, 2021, ուղղված նախարարի, 4 հավանում մեկնաբանությանը

Կրոնի/համոզմունքի հիմքով ատելության խոսքի ամենամեծ չափաբաժինը ներառում է կրոնական համոզմունքներին և արժեքներին չհամապատասխանելու թեմաներով մեկնաբանությունները: Դրանք ներառում են «սատանա», «սրբապիղծ», «անբարոյական» և այլ վիրավորական և նվաստացնող որակումներ:

«Աղջիկ տղամարդ էիր տեսել քեզ կորցրել, թուլացել էիր, բա են կողքիդ գոմիկները ինչ էին քո պես երախները բացել, գնացել էիք ձեր ձեռքերով սպանած երեխեքի շիրիմների վրա հրճվելու ու հոգեկան բավարարվածություն ստանալու, այ սրբապիղծ, անբարոյական, թրքասեր հպատակների թայֆա: Օր լինի ձեզ լինի»:

Հունվարի 31, 2022, ուղղված ԱԺ պատգամավորի, 11 հավանում մեկնաբանությանը

Թշնամության և խտրականության դեպքերն ավելի հաճախ վերաբերում են ազգության, այլ ոչ կրոնական հիմքով ատելության խոսքին: Թշնամանքի պարագայում հաճախակի նշվում են դավաճանության վերաբերյալ մեղադրանքներ, որոնք ազգին, ժողովրդին դավաճանելու կամ թշնամական երկրներին՝ ընդդեմ Հայաստանի աջակցելու մասին են: Այս խմբում են նաև նվաստացման և արժեզրկման մեկնաբանությունները՝ բարոյական արժանիքներ չունենալու կամ մեկնաբանողի արժեքները չկիսելու հիմքով: Խտրականության և թշնամության բնույթի մեկնաբանությունները հատվում են, երբ խոսքը թշնամի ընկալվող ազգերի, մասնավորապես, թուրք և ադրբեջանցի ազգային ինքնություն է վերագրվում թիրախավորված անձին/խմբին՝ փորձելով ներկայացնել վերջինիս որպես հայ հասարակությանն օտար, թշնամի կամ սեփական ազգը դավաճանած: Խտրական բնույթի մեկնաբանությունները, սակայն, չեն սահմանափակվում ազգային խտրականությամբ, հանդիպում են նաև հաշմանդամության, քաղաքական հայացքների, արտաքին/ֆիզիկական տվյալների, գենդերային ինքնության, սեռային պատկանելության և այլ հիմքերով խտրականություն պարունակող մեկնաբանություններ: Բերված օրինակում կա նաև սեռական կողմնորոշման հիմքով թիրախավորում, որն ընդհանուր մեկնաբանությունների մեջ կազմում է 0.6 տոկոսը, և նույնպես կիրառվում են որպես վիրավորական արտահայտություններ:

«Ասենք այ խելքից պակաս ուրիշ խումբ մարդիկ...գոմիկները...այլաստեոված տրանսները...թերուս...անգրագետ...կիսաբացի ժեեեեխը ովքեր են, որ մենք թույլ տանք մեզ ղեկավարեն...այ թուրքի քաաաած...արուն էգից չտարբերող Դեբիլներ»:

Փետրվարի 26, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 2 հավանում մեկնաբանությանը

«Դու թուրք թալանչի, դավաճան, անբարո, փողցային ես»:

Մարտի 2, 2021, ուղղված Նախկին Նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

Բացահայտում 7.

Ատելության խոսքի թիրախավորման ձևը


Ատելության խոսքը ոչ միշտ է ուղղված որևէ անհատի, այն թիրախավորում է նաև խմբերի: Ըստ հետազոտության արդյունքների՝ սոցիալական հարթակներում թիրախավորվող հիմնական խմբերը քաղաքական հայացքներ կիսող խմբերն են, և կարելի է որպես խումբ դիտարկել թիրախավորված անձի ընտանիքը: Քաղաքական հայացքների հիմքով թիրախավորումը դրսևորվում է ոչ միայն աշխարհաքաղաքական կամ հայաստանյան քաղաքական գործընթացների վերաբերյալ դիրքորոշումների տարբերությունների նկատմամբ անհանդուրժողականությամբ, այլ ավելի հաճախ բավականին նեղ՝ կուսակցական պատկանելիության, քաղաքական այս կամ այն առաջնորդին սատարողներին թիրախավորման միջոցով:

Մինչդեռ, խմբի թիրախավորման մյուս դեպքն անձնական կյանքը թիրախավորող ատելության խոսքն է, որը հիմնվում է անձին վերաբերող նեղ անձնական տեղեկությունների և դրանց միջոցով զրպարտությունների շրջանառման վրա, որի միջոցով անձը ներկայացվում է որպես անպարկեշտ, բարոյական արժեքներից և սկզբունքներից զուրկ մարդ: Նման վատաբանումները կիրառվում են նսեմացնելու համար անձի մասնագիտական որակները, պրոֆեսիոնալիզմն ու ազնվությունը: Ընտանիքը թիրախավորող ատելության խոսքը հաճախ թիրախավորում է հանրային գործունեություն ծավալող կնոջ ընտանիքի որոշակի անդամների, ովքեր, համաձայն մեկնաբանողի համոզմունքների, «պատասխանատու են» իրենց ընտանիքների կանանց բռնության ենթարկելու և հանրային քաղաքական ասպարեզում այդ կանանց գործունեությունն արգելելու համար:

Խմբի թիրախավորումը կազմում է ընդհանուր տվյալների 15.3 տոկոսը, կամ 1530 մեկնաբանություններից 233-ը: Այս թվում են հիմնականում քաղաքական հայացքների հիմքով ատելության խոսքը և անձնական կյանքը, ընտանիքը թիրախավորող մեկնաբանությունները: Այստեղ չեն ընդգրկված կրոնական, ազգային, գենդերային կամ հաշմանդամության հիմքով ատելության խոսքի դրսևորումները, քանի որ, ինչպես վերևում ներկայացվել է, վերջիններս չեն թիրախավորում կանանց՝ որպես գենդերային խումբ կամ հաշմանդամություն ունեցող անձանց, որևէ ազգի ներկայացուցիչներին որպես խումբ, այլ հիմնվում են տվյալ խմբի արդեն առկա խոցելիության վրա, հասարակական տարածված խտրականության և կարծրատիպերի վրա՝ անազնվորեն ամրապնդելով իրենց

բացասական դիրքորոշումն առանձին մարդկանց (տվյալ դեպքում հանրային գործունեություն ծավալող կանանց) նկատմամբ

Թիրախավորման տեսակը



«Իդիոտկա հենց ձեր երեխեքի հաշվին ոչխար: Ոնց էս անմեղ երեխեքի գլուխները կերաք ու հողերը հանձնեցիք, ավելի ճիշտ վաճառեցիք, էնպես էլ ձեր երեխեքի կյանքի և հաշմանդամության հաշվին հետ ենք բերելու, պուտանկի վիժվածք: Էդ քո լակոտները ավելի թանկ ե՞ն ,քան իմ ախպերը, թե՞ քո լակոտների արյունը ավելի թանկ է, քան մերը: Ձեզ բոլորիդ տրիբունալով պիտի գնդակահարել, իսկ ձեր եթիմներին առաջնագիծ ուղարկել, որ իրանց արյան գնով հետ բերեն իրանց դավաճան անբարոյական ծնողների վաճառած հողերը»:

Յունվարի 15, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 7 հավանում մեկնաբանությանը

Քաղաքական հայացքների հիմքով թիրախավորումն ընդհանուր մեկնաբանություններում կազմում է 20.5% կամ 313 մեկնաբանություն: Այս հիմքով ատելության խոսքի համատեքստն ընդհանրացումն է անձի և քաղաքական առաջնորդի/առաջնորդների որակների:

«Քեզ նմաներին և քոչոյի թայֆին սատկացնելու (են)»:

Յուլիսի 16, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 3 հավանում մեկնաբանությանը


«Եթե ուրախացող կա, ուրեմն դա դուք էք, որովհետև 30 տարվա ձեր թալանի պատճառով այսօր այդ անմեղ տղանները հատուցեցին իրենց կյանքով: Լռեք և գնացեք, գրողի ծոցը՝ անամոթներ և մտածեք խոսելուց առաջ»:

Փետրվարի 25, 2021, ուղղված Նախկին Նախարարի, 53 հավանում մեկնաբանությանը

Ընտանիքը կամ անձնական կյանքը թիրախավորող մեկնաբանությունները 4.4% են կազմում ընդհանուրի մեջ: Մեկնաբանությունների այս խումբը

«բացահայտում է» կնոջ անձնական կյանքի «ամոթալի» տեղեկությունները, նախկին կամ ներկա հարաբերությունների, քաղաքական դեկլարաների հետ սիրային կապերի մասին՝ այսպիսով արժեզրկելով նրանց մասնագիտական հաջողությունները և հանրային լայն ճանաչումն ու ընդունված լինելը:

Ատելության խոսքի հիմքը



«Բարոյագործ կինը իրավունք չունի խոսելու հայ կնոջ կերպարի մասին»:

Մարտի 8, 2023, ուղղված քաղաքական գործչի, 41 հավանում, 1 հոգատարություն մեկնաբանությանը

«Axr qo nmanner@ zarmanum em pornkutyun aneluc chen mtacum vor amusnutyan masin chpiti mtacen»:

Մեպտեմբերի 3, 2021, ուղղված կին դերասանի, 0 արձագանք մեկնաբանությանը

Կանանց ընտանիքի անդամների թիրախավորումը, նրանց հրապարակային պարսավումն անուղղակի ճնշում է հանրային գործունեություն ծավալող կանանց նկատմամբ, հատկապես երբ նրանց ընտանիքի անդամները հանրային գործունեություն չեն իրականացնում: Նման դեպքերում շրջանառվում են կանանց հատկապես արական սեռի ընտանիքի անդամների արժանապատվությունը, ընտանիքը «վերահսկելու» կարողությունները:

«Սրա ծնողները պիտի ամաչեն այսպիսի բուք մեծացնելու համար»:

Մարտի 28, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 0 արձագանք մեկնաբանությանը

«Տո դանդալուշ, ինչի համար է թավալել գետնին, որ հետո ոտքով էլ հարվածեն: Դրա նման անտերներին, որոնք ոչ հայր ունեն, ոչ մայր ունեն, ոչ եղբայր ունեն (եթե ունենային փողոցներում չեին թափառի) խառնվել էն իր նմաններին և տեղին անտեղին պառկում են ասֆալտին»:

Յուլիսի 4, 2022, ուղղված ԱԺ պատգամավորի, 4 հավանում մեկնաբանությանը

Բացահայտում 8.

Դավադրություններ և ապատեղեկատվություն պարունակող ատելության խոսք

Չետագոտությունը ցույց է տվել, որ երբեմն ատելության խոսքն ուղեկցվում է դավադրության մասին տեսություններով և տարածում է ապատեղեկատվություն, որը ոչ միայն թիրախավորում է անհատին, այլև՝ համակարգերին, ինստիտուտներին և քաղաքական, իրավական, անվտանգային ու սոցիալական մի շարք գործընթացներ: Դրանք հաճախ իրադարձային դրսևորումներ են ունենում, երբ երկրում քննարկվում կամ ընդունվում են նոր օրենքներ, առկա է ճգնաժամային իրավիճակ, ինչպիսին է հակամարտության սրումը, պատերազմը, համավարակը: Նմանօրինակ բովանդակություն պարունակող ատելության խոսքը զգալիորեն տարածում է նաև հակազիտական տեղեկություններ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են ազդել հանրային անվտանգության և առողջության վրա:

«Դե հերիք է խաբեք ժողովրդին... ոչ մի վիրուս էլ չկա ու չի եղել. Հիմա էլ կարողա ազգին պամպերս հագցնեք այ ձեր լավը»:

Յուլիսի 9, 2021, ուղղված նախարարի, 0 արձագանք մեկնաբանությանը

«Իբր դու կոկոլախառը ձեր ժեխանոցով սրսկվել էիք, բա հիմա ինչի ե՞ս մորդ տոռուսիկը քաշել ունիիր: Ես ձեր սրբապիղծ թայֆին չհանդուրժելով մեկնեցի Ռուսաստան, որտեղ ձեր նման ռախիդ ծաղրածուներ չկան, պատվաստումներն էլ իրականացվում են միմիայն կամավորության սկզբունքների համաձայն, այնպես որ ձեր լավի համար այդ արտերկրյա կասկածելի քաքը, որ մարդկային կյանքի տևողությունը կրճատելու հրեշավոր ծրագիր է, չե՞ք կարող ստիպել գիտակից մարդկանց, թո՛ղ սրսկվեն միայն ձեր թափթփուկ ընտանիքներն, ազգականներն, ընկերներն ու բոլոր աջակիցները՝ այսինքն ձեր ողջ ժեխաբոզանոցը»:

Յուլիսի 9, 2021, ուղղված նախարարի, 1 հավանում մեկնաբանությանը

«Ches zgum vor chapert anceles ay angraget dimumt grir heracir toxeq erexanere normal sovoren gnan mankapartez achxaten. Meka dzer cragire chi achxati .uzumeq dranov mardkanc vakcina stanana chilini heracir»:

Յուլիսի 9, 2021, ուղղված նախարարի, 1 հավանում մեկնաբանությանը

«Ուրեմն հիմա լսիր տիկին Լիլու Արցախս ծախեցիք ...անգրագետներով ...Ջինվորիս չհարգեցիք անարժաններով...մշակույթս աղավաղեցիք դավաճաններով...հատուցման օրը մոտենում է հիշեք...Սյունիքիս հասաք հա???»:

Նոյեմբերի 16, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 6 հավանում, 1 հոգատարություն մեկնաբանությանը

Վերոբնութային տվյալների դուրսբերումը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչ հիմքով են առցանց թիրախավորվում հասարակական/քաղաքական գործունեություն ծավալող կանայք, և ինչպիսին է այս ոլորտում գործող կանանց նկատմամբ ատելության խոսքի բնույթը: Տվյալ ուսումնասիրության համար սա հասկանալը կարևոր է պատկերացում կազմելու համար, թե ինչքանով է դա կապված կոնկրետ մասնագիտություն ունեցող կանանց կամ նրանց՝ որոշակի քաղաքական հայացքներ ունենալու հետ: Կարևոր է հասկանալ, թե հայաստանյան հասարակության համար այս ծավալի ատելության խոսքը, որ շրջանառվում է առցանց հարթակներում (իսկ դրանց մեծ ծավալը կասկած չի հարուցում անզեն աչքով տեսանելի լինելու պատճառով, նաև հաստատվում է տվյալ ուսումնասիրության շրջանակներում), ինչ պայմաններում է ժողովրդականություն վայելում: Անկախ նրանից, որ համատեքստը՝ քաղաքական իրավիճակը (համավարակ, պատերազմ, ընտրություններ, արտաքին և ներքին քաղաքական ուղղությունների փոփոխություններ) հիմնականում պայմանավորում է ատելության խոսքի ալիքները, ուսումնասիրության նպատակն է տեսնել՝ արդյոք միայն գենդերային ընկալումներն են միջավայր ստեղծում այսպիսի առցանց թիրախավորման, թե՞ թիրախավորման ուժգնությունն ու բնույթն ազդում են նաև հանրային գործունեություն ծավալող կանանց քաղաքական հայացքների պատճառով, և թե ինչ օրինաչափություններ կան՝ կապված քաղաքական հայացքների և ատելության խոսքի բնույթի փոխկապակցվածության հետ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ գենդերային հիմքով ատելության խոսքը գերակշռողն է (ստացված տվյալների համաձայն՝ 42.6%), երկրորդը՝ քաղաքական դիրքորոշումների հիմքով ատելության խոսքն է (20.5%), և կա վիրավորական, նվաստացնող և արժեզրկող արտահայտությունների բավականին մեծ քանակ, որոնք դժվար է որևէ կերպ դասակարգել, քանի որ մեծ մասամբ արտահայտում են մեկնաբանությունը գրողի զայրույթը կամ հակակրանքը՝ ամենատարբեր վիրավորական արտահայտություններով:

Գենդերի հիմքով ատելության խոսք/անձի թիրախավորումը որպես կին

Դժվար է պնդել, որ հայաստանյան մեդիայում գենդերային հիմքով ատելության խոսքն ուղղակիորեն թիրախավորում է կանանց՝ որպես սոցիալական խումբ: Փոխարենը, այդ ատելության խոսքի թիրախավորումն անուղղակի է, այն ուղղված է առանձին կանանց և հիմնված է գենդերային դերի ընկալման և դրանից բխող կարծրատիպերի վրա: Հատկապես, երբ գործ ունենք հանրային և քաղաքական գործունեության ոլորտների հետ, որտեղ պահանջվում է կանանց դերի հանրային կարծրատիպային ընկալմանը ոչ բնորոշ հատկություններ՝ հաստատակամություն, ինքնավստահություն և այնպիսի բնույթի գործունեություն, որում կանայք լսելի և տեսանելի են: Գենդերային դերով պայմանավորված կարծրատիպերի կիրառումն ատելության խոսքում որևէ սեռին

բնորոշ հատկանիշների բացարձականացման օրինակ է: Թե՛ կանայք, և թե՛ տղամարդիկ ունեն կանացի և առնական հատկանիշներ, որոնցից յուրաքանչյուրը դրսևորվում է՝ կախված իրավիճակից և հանգամանքներից (Lippa 2005), իսկ քաղաքականության մեջ կանացի հատկանիշները հազիվ թե դրսևորվելու դաշտ ունեն: Որևէ սեռին բնորոշ դոմինանտ հատկանիշները բացարձականացնելու եղանակով ատելությունն տարածողները քննադատում կամ ծաղրում են քաղաքականությամբ և հանրային գործունեությամբ զբաղվող կանանց՝ նրանց ներկայացնելով ֆեմինին հատկանիշներից զուրկ: Հաճախակի ներկայացվում է, որ կանայք, որոնք կոշտ քաղաքական դիրքորոշում են հայտնում, կանացի հատկանիշներից առհասարակ զուրկ են, իրենց երեխաների, զուգընկերների/ամուսինների հետ հարաբերություններում նույնպես չեն կարող կանացի հատկանիշներ դրսևորել:

Գենդերի հիմքով ատելության խոսքում աշխատող հիմնական երևույթը կարծրատիպայնացումն ու բացառումն է (exclusion), որը դրսևորվում է թիրախավորվող անձին **կին չհամարելով, կամ «ճիշտ» կին չհամարելով**, ինչը ներառում է թե՛ արտաքին տվյալների ծաղրուծանակ, որոնց առանցքը «գեղեցիկ» կամ «կանացի», «ցանկալի» չլինելու գաղափարն է, թե՛ «անբարոյական», «ամուսնուն անհավատարիմ», «սեռական ծառայություններ մատուցող», «սեռական ճանապարհով կարիերա և ֆինանսական միջոցներ ձեռք բերող», օտար տղամարդկանց համար (ներառյալ ատելության խոսքը տարածողի) բռնի սեռական ցանկությունների օբյեկտ լինելու գաղափարը:

«Բայց քեզ ովա՞սսել թե դու կին էս, դու բեջուռա կենդանի էս»:

Հունիսի 3, 2021, ուղղված ԱԺ պատգամավորի, 32 հավանում, 1 սեր մեկնաբանություն

«Էսի իրա չարությունից երեխա չի ունենալու»:

Հունվարի 11, 2021, ուղղված Նախկին Նախարարի, 19 հավանում

Գենդերային հիմքով ատելության խոսքի այս տեսակները, որոնք հանդիպում են հայաստանյան առցանց տիրույթում, հատկապես վտանգավոր են և ունեն վնասի մեծ չափաբաժին, քանի որ ուղղակի և անուղղակի ձևով թիրախավորում են նաև հանրային գործունեություն ծավալող կանանց ընտանիքի անդամներին, հարազատներին, քննարկում կնոջ անձնական և ընտանեկան կյանքը՝ մեղադրելով և քննադատելով տվյալ կնոջը «կին» չլինելու համար, իսկ հարազատներին՝ «ճիշտ» հարաբերությունների մեջ չլինելու, ինչպես նաև այդ կնոջ հետ անձնական առնչություն ունենալու համար:

«Տեսնես ամուսնուն էլ ա՞սենց անկաշկանդ փոխում»:

Հունիսի 1, 2022, ուղղված ԱԺ պատգամավորի, 2 հավանում մեկնաբանություն

«Վիաչինյանի ընտանիքին եմ ասում՝ թուրքը ձեզ կօգտագործի կվերջացնի, քանի, որ ոչմեկ չիսրում դավաճաներին (դավաճանել էս հայրենիքի՞ տ մեզել կդավաճանես) սկզբունքով, ձեր ընտանիքի անդամներին՝ մանրից մեծ, կգցեն զինորների ձեռքը կբռնաբարեն, աննախ ու նիկոլի աչքի առաջ հերթով երեխեքի գլուխները կկտրեն ու ֆուտբոլ կխաղան, իսկ ամենավերջում ամուսիններով կնստեք երկար ցցերի վրա և պատմությունը կավարտվի: Չիլինի հայ, չիլինի հայոց հարց, չիլինի հայաստան»:

Յուլիսի 25, 2021, ուղղված նախկին ԱԺ պատգամավորի, 2 հավանում մեկնաբանությանը

«Ժխեր նայեք, վաղը թուրքը ձեր երեխեքինա բռնաբարելու ձեր դեմը իսկ էս ազառկեն հրճվելույա կողքից նայելով, ձվի համարեք կռիվ անում այ սրա դեմը առեք թե չէ մի օր գալույն ու յաթաղանով էդ ստամոքսներիդ մեջի լափը թափեն դուրս»:

Ապրիլի 2, 2021, ուղղված վարչապետին, 3 հավանում մեկնաբանությանը

Քաղաքական հայացքների հիմքով ատելության խոսք/անձի թիրախավորումը որպես քաղաքական միավորի՝ երկրի, ազգի կամ կրոնական դոմինանտ խմբի դեմ գործող դավաճան/թշնամի

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ գենդերի հիմքով թիրախավորումից հետո հաջորդ ամենատարածված ատելության խոսքը քաղաքական հայացքների հիմքով է: Այն դրսևորվում է անձի թիրախավորմամբ որևէ քաղաքական ուժին հարելու կամ որոշակի քաղաքական դիրքորոշում ունենալու համար: Առավել տարածված է քաղաքական թիմին պատկանելու հիմքով թիրախավորումը, հաճախ՝ որևէ քաղաքական առաջնորդի աջակցելու առիթով: Անկախ նրանից մեկնաբանությունները կազմակերպված գրոհներ են որոշակի անձանց դեմ, որոշակի նպատակներով, ինչպես վստահեցնում են հետազոտության առանցքային տեղեկատուները, քաղաքական հայացքների հիմքով ատելության խոսքը «նախապատրաստում է» ձախողման, թուլացնում թիրախավորված կնոջ դիրքերը մասնագիտական ասպարեզում, նպաստում նրա գործունեության պասիվացմանը, մինչև անգամ կարող է հանգեցնել գործունեության դադարեցմանը (Տե՛ս նախորդ հղումը): Այս նպատակով կամ առանց որևէ գիտակցված նպատակադրման կատարված թիրախավորումը հիմնականում «մենք» և «նրանք»-ի բաժանումն է: Օտարման (othering) մասին տեսություններն հիմնված են գենդերային և ռասայական ինքնությունների վրա, սակայն Հայաստանի քաղաքական բևեռացման պայմաններում օտարումը, որն իր հետ բերում է ապամարդկայնացում (դեհումանիզացիա) և կարծրատիպավորում, լայնորեն տարածվում է քաղաքական երկխոսությունների, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի քաղաքական խոսույթի մեջ: Վերջին տարիներին, տարբեր երկրներում ժողովրդավարացման ճգնաժամների պայմաններում հատկապես տարածում է ստանում քաղաքական բևեռացումը և ամբոխահաճությունը (պոպուլիզմ), միաժամանակ սոցիալական մեդիայի առկայությունը փոխում է քաղաքական խոսույթի բնույթը՝ ծայրագավառը (պերիֆերիա) մոտեցնելով կենտրոնին (Haynes 2018): Կան հետազոտություններ, որ ցույց են տալիս, որ նման բևեռացման պայմաններում քաղաքական կողմնորոշումը, կուսակցական պատկանելիությունը/նախընտրությունը միաձուլվում է սոցիալական ինքնությանը (Levendusky 2019) և դառնում «մենք»-ը և «նրանք»-ը պայմանավորող կարևոր գործոն:

Մեդիա մոնիտորինգի կյուբից դուրս են բերվում քաղաքական հայացքների հիմքով թիրախավորման օտարման (othering) վարիացիաներ, կամ օտարումից առաջացած դեհումանիզացիա, բացառում (exclusion) և կարծրատիպավորում: Դրանք ունեն ամենատարբեր դրսևորումներ, ինչպես օրինակ՝ ազգային և կրոնական հիմքով ատելության խոսքը: Այս երևույթի հիմքում ազգային կամ կրոնական խտրականությունը չէ, որքան այլաբանությունը (ալեգորիա)՝ հեռացնելու, օտարելու անձին՝ համեմատելով կամ համարելով նրան այլազգի, այլ կրոնի ներկայացուցիչ և այլն: Սա նաև դեհումանիզացիայի օրինակ է, քանի որ ունի «մարդկայինից զուրկ» լինելու ենթատեքստ: Միաժամանակ այս կերպ բացառում (exclusion) է ընթանում, քանի թիրախավորվող անձն իր ինքնությամբ հայ է և մեծ հավանականությամբ (առնվազն այդպես է ընկալվում) քրիստոնյա: Այս կերպ թիրախավորելով՝ փորձ է արվում նրան դուրս թողնել խմբից: Բացի կրոնական և ազգային թեմատիկայով բացառումից և օտարումից, կա նաև «դավաճան» բնութագրիչը, որը նույն համատեքստում է աշխատում: Դավաճանն այն մարդն է, ով մատնել է, վնասել կամ հեռացել է իր խմբից՝ աջակցելով հակառակորդին: Այս դեպքում նույնպես համատեքստը խմբից դուրս գալու գաղափարն է: Ավելին, թիրախավորողն իր վրա առաքելությունն է վերցնում բացահայտել, որ թիրախավորվողն այլևս խմբում չէ, դավաճանել է, պետք է դուրս թողնել «մենք»-ից, ներառել «նրանք»-ի խմբում:

Քաղաքական հայացքների հիմքով թիրախավորման մյուս գործընթացը, որը դարձյալ օտարման բաղադրիչ է, կարծրատիպավորումն է, որն իրենից ներկայացնում է ընդհանրացումներ, պարզունակացում՝ տվյալ դեպքում միայն բացասական հատկանիշների (կամ դրանց երևակայական պատկերացման) տեսանկյունից: Սրա օրինակներից են՝ բացասական հատկանիշներ վերագրել քաղաքական թիմի բոլոր անդամներին և ենթադրել/ներկայացնել, որ եթե տվյալ անձն աջակցում է քաղաքական թիմին, կամ թիմի անդամ է, ապա ունի պայմանական ինչ-որ բացասական, հաճախ՝ անմարդկային հատկանիշներ:

Բացի գենդերային և քաղաքական հայացքների հիմքով թիրախավորումից, կա ատելության խոսքի ևս մեկ խումբ, որը կամ գուցեղավում է նախորդ երկուսի հետ, կամ առանձին է հանդիպում: Խոսքը ֆիզիկական և հոգեկան/մտավոր տվյալների հիմքով թիրախավորումն է՝ որպես կարծրատիպայնացման, օտարման, բացառման, դեհումանիզացիայի դրսևորում՝ բոլորը միաժամանակ: Անձին համարելով կամ ներկայացնելով որպես հաշմանդամություն ունեցող, ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող, «թերի»՝ ենթադրվում է, որ իր կարծիքը, խոսքը, ներկայությունը/գոյությունը զբաղեցրած պաշտոնում համաչափ և օրինաչափ չէ, հետևաբար՝ տվյալ կինն այդ պաշտոնում լեգիտիմ չէ:

Ատելության խոսքը՝ որպես քաղաքական գործիք

Գրականության մեջ արդեն քննարկված դեպքեր կան, թե ինչպես քաղաքական առաջնորդները, մասնավորապես պոպուլիստական քաղաքական ղեկավարները կիրառում են գենդերային դերի կարծրատիպերը, նաև կնատյացությունը որոշակի քաղաքական նպատակների հասնելու, ավելի հանրային դառնալու համար և այլն (Waisbord 2020): Հանրային դեմքեր, պետական բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք կամ կուսակցական առաջնորդներ, որոնց ձայնն ավելի լսելի է, ազդեցությունը՝ նշանակալի, իրենց խոսքում հնչեցնում են

գենդերի հիմքով (և ոչ միայն) ատելության խոսք, խթանում գենդերային կարծրատիպերը: Այս հանգամանքը նույնպես նպաստում է գենդերի հիմքով ատելության խոսքի տարածմանը՝ ավելի ամրապնդելով գենդերային դերերի մասին կարծրատիպերն ու որևէ սեռի վերագրվող հատկանիշների բացարձականացմանն ու պարզունակացմանը: Պատերազմին հաջորդող տարվա ընթացքում հատկապես նախընտրական շրջանում, քաղաքական առաջնորդների ելույթներում առանձնապես ակնհայտ էին ատելության խոսքի դրսևորումները, մասնավորապես՝ բռնության կոչեր, կանանց նսեմացնող կամ գենդերային դերով պայմանավորված կարծրատիպային արտահայտություններ: Նույն ժամանակաշրջանն ամենից խտացվածն է հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաքակազմում, որտեղ ատելության խոսքի ամենաինտենսիվ դրսևորումները հենց 2021 թվականի տարբեր ամիսներին են նկատվել: Չնայած, ճիշտ չէ պնդել, որ ատելության խոսքի ինտենսիվությունը պայմանավորված է եղել միայն քաղաքական առաջնորդների թողտվությամբ, այնուամենայնիվ, առաջնորդին կրկնօրինակելը և նույն գործիքների կիրառմամբ քաղաքական հակառակորդների դեմ պայքարը սոցիալական ցանցերի օգտատերերի համար կարող էր զգալի գործոն հանդիսանալ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, խոսելով ընդդիմադիր քաղաքական գործչի մասին, որը տեսանյութեր էր պատրաստում իր բնակարանի խոհանոցից, ասում է՝ «...ասում ա՛ն էս եմ տղամարդը, կոկիսու սեղանի տակից դուրս չեմ գալի: ...դու հըը կոկիսուց դուրս արի, նոր ուրիշներին Ֆեյսբուքից դուրս գալու խորհուրդ տուր»: Այս արտահայտություններն ակնհայտորեն լեգիտիմացնում են այն կարծրատիպերը, որ քաղաքականությունը տղամարդկանց գործն է, և որ այն հակասում է/անհամատեղելի է կնոջ գենդերային դերին՝ խոհանոցին՝ այս կերպ փորձելով արժեզրկել իր՝ արական սեռի քաղաքական հակառակորդին: Մեկ այլ օրինակ է ընդդիմադիր քաղաքական գործիչ, արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանի խոսքից մեջբերումը, որն ակտիվորեն տարածվում էր մեդիայում, որտեղ վերջինս հանրապետության վարչապետին «խորհուրդ է տալիս ինքնասպան լինել»: Ավելին, լրատվական գործակալությունները նյութը տարածելիս որպես վերնագիր են ընտրել հենց ատելության խոսքը՝ զայրույթ հրահրելով և ատելության խոսքի մի նոր ալիք բարձրացնելով մեկնաբանությունների բաժնում: Մեծ լսարան ունեցող անձանց նման վարքագիծը սպառնալիք է մի քանի շերտերով: Ամենից ազդեցիկն ատելության խոսքի, բռնության քարոզի և գենդերային կարծրատիպերի ամրապնդումն ու լեգիտիմացումն է, որն իր հերթին կանանց դրդում է հեռու մնալ, պասիվանալ հանրային պաշտոններից և մասնագիտություններից, խուսափել դիրքորոշում արտահայտելուց կամ պարզապես թողնել ոլորտը: Հաջորդ կարևոր բացասական ազդեցությունը լրատվամիջոցների էջերում շրջանառվելու արդյունքում նոր ատելության խոսքի գեներացումն է, երևույթի մասսայականացումը տվյալ հրապարակման մեկնաբանություններում կամ այլուր: Այս իմաստով, կարելի է նշել, որ մյուս կողմից հենց մեդիաներն են նպաստում ատելության խոսքի ծավալներին և ինտենսիվությանը՝ վերնագրերում տեղադրելով զայրույթ և հակակրանք առաջացնող բովանդակություններ՝ լավ իմանալով, որ բազմաթիվ օգտատերեր կարդում են նյութի միայն վերնագիրը՝ ոչ բովանդակությունը:

Հետազոտության արդյունքները կարևոր ներդրում են հայաստանյան առցանց տիրույթում ատելության խոսքը, դրա գենդերային հիմքերը և քաղաքական խոսույթում կիրառության ձևերը հասկանալու համար: Այս աշխատանքն ապացուցում է, որ ատելության խոսքն առցանց չվերահսկվող տարածքներում անկառավարելի չափերի է հասնում: Նույնիսկ այն լրատվամիջոցները, որոնք առանց ինքնաշխատ համակարգեր ունենալու մեկ առ մեկ հեռացնում են ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները, միևնույն է, ի վիճակի չեն լիարժեք կերպով խուսափել իրենց հարթակներում ատելության խոսքի առկայությունից: Հետազոտությունը նաև հաստատեց, որ կին հանրային կերպարների թիրախավորումը մեծ մասամբ գենդերի հիմքով է տեղի ունենում, ինչը հատկապես ակտիվանում է քաղաքական հրապարակումների ժամանակ: Երկրում տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին պարբերաբար մեծ թափ է ստանում առցանց ատելության խոսքի դրսևորման տարրերը՝ հայիոյախոսությունը և այլ տիպի վիրավորական ու նվաստացնող բառապաշարի շրջանառությունը: Այս և այլ ցուցանիշներ ամուրի հիմք են տալիս հիմնավոր առաջարկներով հանդես գալ թե՛ օրենսդրական փոփոխություններ կատարելու, թե՛ ինքնակարգավորման մեխանիզմները խթանելու, թե՛ կրթական քաղաքականությունների մշակման ուղղությամբ: Ցանկալի արդյունքների հասնելու համար, բացի պետական կառավարման մարմիններից, հասարակական և բիզնես ոլորտի կազմակերպությունները նույնպես կարող են օգուտներ քաղել ստացված տվյալներից՝ իրենց կազմակերպության կամ մասնագիտական համայնքի համար մշակելով Էթիկական կանոններ և նպաստելով հայաստանյան առցանց տիրույթում ատելության խոսքի դեմ պայքարին՝ թույլ չտալով, որ իրենց առցանց հարթակներն ատելության խոսքի տարածման տիրույթներ դառնան:

Այնուամենայնիվ, հետագա հետազոտությունների համար դեռ ուսումնասիրելու մեծ դաշտ կա, ավելի լավ հասկանալու, թե ատելության խոսքի յուրաքանչյուր բաղադրիչ ինչ պայմաններում է տարածվում, մասնավորապես՝ շատ կարևոր է հասկանալ ատելության խոսքի կիրառումը քաղաքական պայքարում, տեսնել, թե ինչ մեխանիզմներ են կիրառվում, բայցահայտել դրանց ուղղորդված լինելը կամ այն պայմանները, որտեղ այն ինքնաբուխ է առաջանում: Այս ամենը կարող է նպաստել հանրային հաղորդակցության առողջացմանը՝ նվազեցնելով հասարակության որոշակի խմբերի (օր՝ գենդերային խմբեր, քաղաքական թիմեր, հաշմանդամություն ունեցողներ և այլն) մարգինալացումը և նրանց վերաբերյալ կարծրատիպերի տարածումը:

Առջանց ուսնձգություններն ու ատելության խոսքը դարձել են համատարած ինդիր՝ Եականորեն ազդելով կանանց վրա, հատկապես նրանց, ովքեր հանրային դեմքեր են. քաղաքական գործիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ: Նման նպատակաուղղված ատելության խոսքը ոչ միայն խախտում է անձանց ազատ արտահայտվելու իրավունքը, այլ ունի «սառեցնող ազդեցություն»՝ ձեռնպահ թողնելով կանանց հանրային դերերին մասնակցելուց կամ իրենց կարծիքն արտահայտելուց:

Տեղական կարգավորումներ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի և արտահայտվելու ազատությունը³, սակայն արգելում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելության հրահրումը⁴:

Հայաստանում ատելության խոսքի դեմ հիմնական կարգավորումը տալիս է ՀՀ Քրեական օրենսգիրքը, սակայն կան նաև դրույթներ քաղաքացիական և վարչական օրենսդրություններում, որոնք կարող են անդրադառնալ հարակից ինդիրներին:

Քրեական, քաղաքացիական և վարչական միջոցների համակցումն ատելության խոսքի դեմ պայքարում ապահովում է որոշակի շրջանակ, ինչը որոշ առումներով նման է եվրոպական մի շարք երկրների մոտեցումներին: Այնուամենայնիվ, առկա են շատ բացեր, որոնք լրացման կարիք ունեն՝ ապահովելու համար համապարփակ և արդյունավետ պայքար ատելության խոսքի դեմ, մասնավորապես ատելության խոսքի հիմքերի և արտահայտման ձևերի տարանջատման ու դրանց իրավական կարգավորումների առումով: Քաղաքացիական և վարչական օրենքները լրացուցիչ միջոցներ են տրամադրում անհատների համար՝ փոխհատուցում հայցելու, իսկ իշխանություններին՝ կարգավորելու և կանխելու ատելության խոսքի տարածումը՝ դրանով իսկ նպաստելով ավելի ընդգրկուն և հարգալից հանրային խոսույթին:

Ատելության խոսքի քրեականացումը հավասարակշռող գործողություն է՝ խոսքի ազատության պաշտպանության և ատելության հրահրման հետևանքով առաջացած վնասը կանխելու միջև: Հայաստանի մոտեցումը, ինչպես արտացոլված է նրա Քրեական օրենսգրքում, որոշակիորեն համահունչ է միջազգային չափանիշներին՝ կենտրոնանալով հանրային միջավայրում և լրատվամիջոցներում դրսևորված ատելության հրահրման վրա: Այնուամենայնիվ, հողվածներում հիմնականում դիտարկվում է ատելությունն ազգային, ռասայական և կրոնական հիմքերով, մինչդեռ գենդերային, քաղաքական, սեռական և սոցիալական այլ հատկանիշներով ու հիմքերով պայմանավորված ատելությունը շատ դեպքերում դուրս է մնում այս շրջանակից: Մասնավորապես, ՀՀ քրեական

³ ՀՀ Սահմանադրություն, 42 հոդված, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>

⁴ ՀՀ Սահմանադրություն, 77 հոդված, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>

օրենսգրքի 329-րդ հոդվածը քրեականացնում է ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելուն ուղղված գործողությունները, որոնք կատարվում են հրապարակայնորեն կամ լրատվամիջոցների, կամ համացանցի միջոցով՝ անհատների կամ խմբերի նկատմամբ՝ հիմնված ազգության, ռասայի կամ կրոնի վրա: Նման գործողությունների համար նախատեսված պատիժները⁵ կարող են ներառել տուգանքներ, ուղղիչ աշխատանքներ կամ ազատազրկում՝ կախված տարածման ծանրությունից և եղանակից⁶: Սակայն, երբ համեմատում ենք եվրոպական երկրների պատիժների հետ, ինչպիսիք են Գերմանիան կամ Ֆրանսիան, Հայաստանում պատիժներն, ընդհանուր առմամբ, ավելի մեղմ են:

Այդուհանդերձ, հոդվածներում չի դիտարկվում բազմաթիվ այլ հիմքերով դրսևորված ատելությունը, և դրանք մնում են օրենքի կարգավորման շրջանակից դուրս: Այսպես. քաղաքական հայացքների հիման վրա արտահայտվող ատելության խոսքը հաճախ դուրս է մնում իրավական կարգավորումներից, ինչը թույլ է տալիս, որ քաղաքական հայացքների նկատմամբ ուղղված ատելության խոսքերը չարժանանան համապատասխան պատժի: Ինչ վերաբերվում է գենդերային հիմքով պայմանավորված ատելությանը, որը ևս լայն տարածում ունի, կրկին օրենքում հատուկ անդրադարձ չի արվում: Սոցիալական կարգավիճակի հիմքով ատելության խոսքը նույնպես հաճախ անտեսված է: Օրինակ, աղքատության կամ գործազրկության հիմքով ուղղված ատելության խոսքերը հաճախ դուրս են մնում իրավական վերահսկողությունից, ինչը թույլ է տալիս խտրական վերաբերմունքի տարածմանը: Սեռական կողմնորոշման, ինչպես նաև մշակութային առանձնահատկությունների հիմքերով պայմանավորված ատելության խոսքը նույնպես հաճախ անտեսված է: Օրինակ, սեռական փոքրամասնությունների և/կամ որոշակի մշակութային խմբերի նկատմամբ ատելության խոսքը հաճախ չի ստանում պատշաճ իրավական արձագանք:

Այսպիսով, ատելության խոսքի դեմ համապարփակ պայքարն ապահովելու համար անհրաժեշտ է, որ ատելության խոսքի բոլոր հիմքերը ներառվեն իրավական կարգավորումներում:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է մեխանիզմներ, որոնք կարող են օգտագործվել ատելության խոսքին անուղղակիորեն անդրադառնալու համար.

-
- *Չրպարտություն և վիրավորանք.* Քաղաքացիական օրենսդրության համաձայն՝ անհատներն իրավունք ունեն զրպարտության և վիրավորանքի համար փոխհատուցում հայցել: Եթե ատելության խոսքը ներառում է զրպարտիչ հայտարարություններ կամ վիրավորանք, որոնք վնասում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, ապա տուժած անձը կարող է քաղաքացիական հայց ներկայացնել վնասի հատուցման համար:
-

⁵ ՀՀ քրեական օրենսգիրք, 329 հոդված
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191266>

⁶ ՀՀ քրեական օրենսգիրք, 330 հոդված
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=191266>

-
- *Ոչ կյուրթական վնաս*. Զաղաքացիական օրենսգիրքը թույլ է տալիս հատուցել ոչ կյուրթական վնասը (բարոյական վնասը)՝ պատճառված գործողություններով, որոնք խախտում են անձնական իրավունքները, ներառյալ՝ արժանապատվությունն ու պատիվը: Ատելության խոսքը, որը հոգեբանական վնաս կամ անհանգստություն է պատճառում, կարող է ընկնել այս դրույթի ներքո:
-

Հայաստանի Վարչական օրենսդրությունը⁷ ներառում է դրույթներ, որոնք կարող են անդրադառնալ ատելության խոսքին որոշակի միջավայրերում, հատկապես հանրային և լրատվական համատեքստում: Օրինակ, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն հանրային կարգի խախտման համար՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ընթացքում զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը, ինչը ներառում է հանրային միջոցառումների ժամանակ ատելության խոսք արտահայտելու դեպքեր: Նման դրույթները կարող են օգտագործվել նաև սոցիալական մեդիայի կամ լրատվամիջոցների միջոցով ատելության խոսքի ձևերի կամ հասարակական կարգի խախտումների լուծման համար՝ այդպիսով կանխարգելելով ատելության խոսքի տարածումը հանրային տիրույթում:

Հայաստանում «Չանգվածային լրատվության մասին» օրենքը⁸ կարգավորում է լրատվամիջոցների գործունեությունը և ներառում է դրույթ՝ ատելության խոսքի տարածումը կանխելու համար, մասնավորապես 7-րդ հոդվածով արգելվում է քրեորեն պատժելի արարքներ քարոզող տեղեկատվության տարածումը: Հետևաբար, ՉԼՄ-ներին արգելվում է տարածել այնպիսի բովանդակություն, որն ատելություն կամ խտրականություն է հրահրում ազգության, ռասայի կամ կրոնի հիման վրա: Այնուամենայնիվ, այն բացահայտորեն չի նշում ատելության խոսքը՝ հիմնված գեղեցիկ, սեռական կողմնորոշման, քաղաքական հայացքների կամ այլ կատեգորիաների վրա՝ թողնելով զգալի բացեր օրենքում: Ընդ որում, պետք է ընդգծել, որ այստեղ խոսքը չի գնում լրատվամիջոցի կողմից հրապարակած գրառման ներքո արված մեկնաբանություններին, մինչդեռ դրանք նույնպես վերջինիս պատասխանատվության տիրույթում են:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը⁹ միտված է Հայաստանում խտրականության կանխարգելմանը և հավասարության խթանմանը: Այն ներառում է դրույթներ, որոնք կարող են օգտագործվել ատելության խոսքի դեմ պայքարելու համար.

⁷ Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73129>

⁸ Չանգվածային լրատվության մասին ՀՀ օրենք, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=1379>

⁹ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, 19 հոդված, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=83841>

- Օրենքը մեխանիզմներ է նախատեսում խտրականության ակտերը վերացնելու և վերանայելու համար, որոնք կարող են ներառել ատելության խոսք: Այն սահմանում է փոխհատուցում հայցելու անհատների իրավունքները և պետական մարմինների պարտականությունները՝ կանխելու խտրական գործելաոճը:

Միջազգային դատական դեպքերի ուսումնասիրություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործը¹⁰

Մեկնաբանությունների մոդերացումը ՉԼՄ-ների կայքերում և իրենց կողմից վարվող սոցիալական մեդիայի էջերում կարևոր գործընթաց է, որը նպաստում է ատելության խոսքի, խտրականության և վիրավորանքի կանխարգելմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործը հստակեցրել է, որ ՉԼՄ-ները պատասխանատվություն են կրում իրենց հարթակներում հրապարակված օգտատերերի մեկնաբանությունների համար, եթե դրանք պարունակում են ատելության խոսք կամ այլ անօրինական բովանդակություն: Միջազգային և ազգային օրենսդրությունները պահանջում են, որ ՉԼՄ-ները և առցանց հարթակները կանխարգելեն և հեռացնեն ատելության խոսք պարունակող մեկնաբանությունները՝ պատասխանատվություն կրելով դրանց տարածման համար: Մոդերացումը թույլ է տալիս կանխել ատելության խոսքի և խտրականության տարածումը, ինչը կարող է նպաստել հասարակական կարգի և անվտանգության պահպանմանը: Այն նաև խթանում է առողջ և կառուցողական քննարկումների զարգացումը՝ վերացնելով վիրավորանքը և ատելության խոսքը: Վերջապես, մոդերացումը բարելավում է հրապարակման որակը: Այն օգնում է պահպանել քննարկումների որակը՝ խրախուսելով փաստարկված և հարգալից մեկնաբանություններ: Մոդերացումը նաև պաշտպանում է օգտատերերին ատելության և վիրավորանքի դեմ, ինչը կարող է բարելավել հարթակի հեղինակությունը և օգտատերերի վստահությունը:

MTE & Index.hu Zrt. ընդդեմ Հունգարիայի¹¹

Գործը վերաբերում է մեկնաբանությունների մոդերացմանն ու վերահսկմանը: ՄԻԵԴ-ը որոշեց, որ Հունգարիայի դատարանների կողմից լրատվական կայքին պատասխանատվության ենթարկելն իր օգտատերերի վիրավորական մեկնաբանությունների համար խախտում էր կայքի խոսքի ազատության իրավունքը: Դատարանը շեշտեց, որ կարևոր է, որ առցանց հարթակներն ունենան հնարավորություններ իրենց օգտատերերի կողմից անօրինական բովանդակության դեմ պայքարելու համար, սակայն

¹⁰ European Court of Human Rights, CASE OF DELFI AS v. ESTONIA, (Application no. 64569/09), <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22appno%22:%5B%2264569%2F09%22%5D%7D>

¹¹ European Court of Human Rights, Magyar Tartalomszolgáltatók Egyesülete and Index.hu Zrt v. Hungary - 22947/13, <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-226196%22%5D%7D>

պետությունները պետք է հավասարակշռեն խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանափակումների միջև:

Sanchez v. France¹²

Գործը կարևոր նախադեպ է, որը վերաբերում է սոցիալական մեդիա հարթակներում ատելության խոսքի տարածման համար պատասխանատվությանը: Այս գործը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) ուշադրության կենտրոնում հայտնվեց, քանի որ այն առաջացրեց քննարկումներ խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանափակումների վերաբերյալ: ՄԻԵԴ-ը գտավ, որ ֆրանսիական դատարանների որոշումը խախտել է Սանչեսի խոսքի ազատությունը: Դատարանը շեշտեց, որ սոցիալական մեդիա հարթակներում օգտատերերի մեկնաբանությունների համար անհատական պատասխանատվությունը պետք է հիմնված լինի հստակ կանոնների և սկզբունքների վրա: ՄԻԵԴ-ը նշել է, որ քաղաքական գործիչները կարող են պատասխանատվություն կրել իրենց սոցիալական մեդիա էջերի բովանդակության համար, սակայն այդ պատասխանատվությունը պետք է լինի համաչափ և հիմնավորված: Դատարանն ընդգծել է, որ սոցիալական մեդիա հարթակներում բովանդակության մոդերացման մեխանիզմները պետք է լինեն արդյունավետ, որպեսզի կանխեն ատելության խոսքի տարածումը՝ միաժամանակ չխախտելով խոսքի ազատությունը: Այսպիսով, Sanchez v. France գործը կարևոր է մի շարք պատճառներով: Այն ընդգծում է, որ խոսքի ազատությունը չի նշանակում անսահմանափակ իրավունքներ: Սոցիալական մեդիա հարթակները և օգտատերերը պետք է լինեն պատասխանատու իրենց արտահայտած կարծիքի համար, հատկապես, երբ դրանք պարունակում են ատելության խոսք կամ խտրականություն: Դատարանի որոշումը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է գտնել հավասարակշռություն խոսքի ազատության և հասարակական կարգի, ազգային անվտանգության ու անհատական արժանապատվության պաշտպանության միջև:

Այս նախադեպերն ընդգծում են, որ մոդերացման գործընթացը պետք է լինի արդյունավետ և թափանցիկ, միաժամանակ այն պետք է պաշտպանի խոսքի ազատությունը և ապահովի հասարակական կարգի պահպանումը:

Միջազգային կարգավորումներ

Անդրադառնալով միջազգային կարգավորումներին՝ ստորև ներկայացվում են տարբեր երկրների ազգային օրենքներն ու քաղաքականությունները, որոնք ուսումնասիրում են կանանց նկատմամբ առցանց ոտնձգությունների և ատելության խոսքի դեմ պայքարի միջոցառումները:

Միացյալ Նահանգներում առցանց ոտնձգություններին և ատելության խոսքին վերաբերող իրավական դաշտը մասնատված է: Թեև ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխությունը պաշտպանում է խոսքի ազատությունը, այն չի պաշտպանում ատելության խոսքից զերծ մնալը, որը վերածվում է սպառնալիքների կամ ոտնձգությունների: Այնուամենայնիվ, ատելության խոսքի որոշ ձևեր կարող են հետապնդվել այլ օրենքների համաձայն,

¹² European Court of Human Rights, Sanchez v. France [GC] - 45581/15, <https://hudoc.echr.coe.int/fre#%22itemid%22:%22002-14074%22>

ինչպիսիք են ոտնձգությունների, սպառնալիքների կամ ատելության հանցագործությունների դեմ ուղղված օրենքները: Տարբեր նահանգներում կան հակախտրական օրենքներ, որոնք անդրադառնում են ատելության խոսքին: Հիմնական օրենսդրական միջոցառումները ներառում են.

-
- **Հաղորդակցության բարեվարքության մասին օրենքի (CDA) 230 Բաժինը**¹³: Այս օրենքը առցանց հարթակներին անձեռնմխելիություն է տալիս օգտատերերի կողմից ստեղծված բովանդակության համար պատասխանատվությունից, ինչը դժվարեցնում է առցանց ոտնձգությունների հետապնդումը: Այնուամենայնիվ, վերջին քննարկումները կենտրոնացել են 230 Բաժնի բարեփոխման վրա՝ հարթակներն ավելի հաշվետու դարձնելու համար:

-
- **Կանանց նկատմամբ բռնության մասին օրենքը (VAWA)** ¹⁴՝ վերահաստատված 2022 թվականին, ներառում է դրույթներ կիբեռհետապնդումների, առցանց ոտնձգությունների և ինտիմ նկարների՝ առանց համաձայնության տարածման դեմ, բռնության կանխարգելման նոր ծրագրեր, որոնք կենտրոնանում են վերականգնողական և տրավմայի մասին տեղեկացված պրակտիկայի վրա: Այդ կապակցությամբ ստեղծվել է Անհատների դեմ կիբեռհանցագործությունների ազգային ռեսուրս կենտրոնը: *Չնայած այս միջոցառումներին, կիրարկումը մնում է դժվար՝ պայմանավորված իրավասության խնդիրներով և տեխնոլոգիաների արագ զարգացմամբ:*

Եվրոպական միությունը և անդամ պետությունները որդեգրել են ավելի համապարփակ մոտեցում՝ Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգի (GDPR) և ատելության խոսքին ուղղված հատուկ հրահանգների միջոցով:

Թվային ծառայությունների ակտը (DSA)¹⁵ նպատակ ունի ստեղծել ավելի ապահով թվային տարածք՝ ավելի խիստ կանոնակարգերով, թե ինչպես են հարթակները վարվում հակաիրավական և մարդու արժանապատվության դեմ ուղղված բովանդակությունների հետ, ներառյալ՝ առցանց ոտնձգությունները և ատելության խոսքը¹⁶: Այն առավել շատ կենտրոնանում է շատ մեծ առցանց հարթակների (very large online platforms /VLOP) վրա՝ պարտադրելով

¹³ Congressional Research Service, Section 230 of the Communications Act of 1934 <https://crsreports.congress.gov/product/pdf/R/R46751>}}

¹⁴ S.3623 - Violence Against Women Act Reauthorization Act of 2022 - <https://www.congress.gov/bill/117th-congress/senate-bill/3623/text>

¹⁵ Regulation (EU) 2022/2065 of the European Parliament and of the Council of 19 October 2022 on a Single Market For Digital Services and amending Directive 2000/31/EC (Digital Services Act), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32022R2065>

¹⁶ European Union, The main goals of the Digital Services Act, <https://digital-strategy.ec.europa.eu/en/policies/safer-online>

տեխնոլոգիական հսկաներին, ինչպիսիք են Ֆեյսբուքը, Գուգլը, Յություբը իրականացնել բովանդակության մոդերացիա՝ ելնելով Ակտում նշված դրույթներից: Ընդ որում, պետք է նշել, որ Ակտի գործունեության մեխանիզմը թափանցիկության հաշվետվությունների պահանջն է: Այսինքն, այս հարթակները պարտավորվում են վերահսկող մարմինն տրամադրել հաշվետվություններ կատարած աշխատանքների վերաբերյալ, ինչը նպաստում է Ակտի դրույթների ամբողջական կիրարկմանը: Ակտի դրույթների խախտումը ԵՄ տարածքում հանգեցնելու է շատ մեծ առցանց հարթակների համաշխարհային տարեկան շրջանառության մինչև 6% տուգանքի, ինչն ավելի մեծ գումար է կազմում, քան համեմատության համար, օրինակ, Հայաստանի տարեկան բյուջեն: Սա ԵՄ ջանքերի մի մասն է՝ ապահովելու, որ առցանց հարթակները պատասխանատվություն ստանձնեն իրենց ծառայությունների արդյունքում դրսևորված ապօրինի և վնասակար բովանդակության համար, ինչպես նաև ապահովեն ավելի անվտանգ և հաշվետու առցանց միջավայր: *Օրինակ՝ 2023 թվականին Meta Platforms-ի՝ Ֆեյսբուքի մայր ընկերության տարեկան գլոբալ եկամուտը կազմել է մոտավորապես 134,9 միլիարդ ԱՄՆ դոլար: Եվ եթե Ֆեյսբուքը ԵՄ տարածքում խախտեր Ակտի դրույթները, ապա կարող էր տուգանվել մինչև 8,1 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով:*

Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգը¹⁷, որը նախևառաջ հանդիսանում է անձնական տվյալները պաշտպանող օրենք, անհատներին իրավունք է տալիս պահանջելու հեռացնել այն անձնական տվյալները, որոնք վիրավորական են կամ անհանգստացնող:

Ռասիզմի և այլատյացության դեմ պայքարի ԵՄ շրջանակային որոշումը (2008)¹⁸ պահանջում է անդամ պետություններին քրեականացնել բռնության կամ ատելության հրահրումը, որն ուղղված է մարդկանց խմբի կամ խմբի անդամի նկատմամբ, որը հիմնված է ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ազգային կամ էթնիկ ծագման վրա: ԵՄ երկրներում պատժամիջոցները կարող են տատանվել տուգանքներից մինչև ազատագրվում: Այսպես.

-
- **Գերմանիայի Քրեական օրենսգրքի (Strafgesetzbuchs)** 130-րդ հոդվածը¹⁹ քրեականացնում է ատելության հրահրումը և/կամ բռնի կամ կամայական միջոցներ ձեռնարկելու կոչերը բնակչության տարբեր խմբերի նկատմամբ: Քաղվածք հոդվածից. «Յուրաքանչյուր ոք, ով կարող է խախտել հասարակական անդորրը, ա) ատելություն է հրահրում, բռնության կամ կամայական միջոցների կոչ է անում, կամ բ) ձեռնարկում է քայլեր ուղղված այլոց մարդկային արժանապատվության դեմ՝ վիրավորելով, չարամտորեն

¹⁷ General Data Protection Regulation, GDPR, <https://gdpr-info.eu/>

Եվրախորհրդի որոշում թիվ 2016/679, Եվրամիության որոշում, որի միջոցով Եվրախորհրդարանը և Եվրահանձնաժողովը, ամրապնդում և ներդնում են Եվրամիության (ԵՄ) բոլոր անձանց անձնական տվյալների պաշտպանությունը: Որոշումն ուղղված է նաև ԵՄ-ից տվյալների արտահանմանը:

¹⁸ Council Framework Decision 2008/913/JHA of 28 November 2008 on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32008F0913>

¹⁹ German Criminal Code (Strafgesetzbuch – StGB), https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/

արհամարհելով կամ զրպարտելով որոշակի խմբին կամ անհատին՝ այլ խմբի կամ բնակչության մի մասի նրանց անդամակցության պատճառով, պատժվում է ազատազրկմամբ՝ երեք ամսից հինգ տարի ժամկետով»:

- **Գերմանիայի Սոցցանցերում իրավական կիրարկումը բարելավելու մասին օրենքը** (Netzwerkdurchsetzungsgesetz - NetzDG²⁰) համացանցային հարթակներում (Facebook, Twitter, YouTube և այլն) ատելություն հրահրող մեկնաբանությունների, կեղծ լուրերի ու ապատեղեկատվության դեմ հետևողական միջոցառումների ձեռնարկման և դրանց արագ հեռացման համար է ընդունվել: Ի դեպ, օրենքը նաև ենթարկվել է քննադատության, հիմնականում մեդիա ոլորտի մի շարք ներկայացուցիչների, իրավապաշտպանների, ակտիվիստների, մեդիա ու տնտեսական տարբեր միավորումների կողմից: 2017թ. հունիսի 1-ի [գեկուլցում](#) օրինագիծը [քննադատել էր](#) նաև ՄԱԿ-ի կարծիքի ազատության հարցերով հատուկ զեկուլցող Ղևիդ Քայեն: Քննադատություններում գլխավորապես նշվում է, որ օրենքը կարող է սահմանափակել խոսքի ու կարծիքի ազատությունը և գրաքննության վտանգ ներկայացնել: Օրենքի համաձայն՝ սոցիալական ցանցերը պարտավորվում են 24 ժամվա ընթացքում հեռացնել կամ արգելափակել ատելության խոսքը: Օրենքը և սահմանված ընթացակարգը խախտելու կամ հակասող գործողությունների դեպքում սոցիալական ցանցերին սպառնում է 500 հազարից մինչև 5 մլն եվրո, որոշ դեպքերում՝ մինչև 50 մլն եվրո տուգանք²¹:

- **Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը²² և մամուլի օրենքներն** արգելում են հանրային և մասնավոր հաղորդակցությունը, որը զրպարտիչ կամ վիրավորական է, կամ որը խտրականություն, ատելություն կամ բռնություն է հրահրում անձի կամ խմբի նկատմամբ՝ ծագման վայրի, էթնիկ պատկանելության կամ դրա բացակայության, ազգության, ռասայի, կրոնի կամ համոզմունքի, գենդերի, սեռական կողմնորոշման կամ հաշմանդամության հիմքով: Քրեական օրենսգրքի 225-1, 225-2 հոդվածներն անդրադառնում են հանրային և մասնավոր հաղորդակցությանը, որը զրպարտիչ, վիրավորական կամ խտրականություն, ատելություն կամ բռնություն է հրահրում: Նույն օրենքի 225-4 հոդվածով սահմանված է պատասխանատվություն սադրանքի, զրպարտության, խտրականության կամ բռնության հետ կապված հանցագործությունների համար՝ տույժերի տեսքով:

²⁰ The Network Enforcement Act (Netzwerkdurchsetzungsgesetz, NetzDG), <https://www.loc.gov/item/global-legal-monitor/2021-07-06/germany-network-enforcement-act-amended-to-better-fight-online-hate-speech/>
Gesetz zur Verbesserung der Rechtsdurchsetzung in sozialen Netzwerken (Netzwerkdurchsetzungsgesetz - NetzDG), <https://perma.cc/RW47-95SR>

²¹ Hate crime on the Internet, Die wichtigsten Themen des Bundesamts für Justiz, (Օրենքի կիրարկումը վերահսկում է Արդարադատության նախարարությունը), https://www.bundesjustizamt.de/DE/Themen/HasskriminalitaetInternet/Fragen/Fragen_node.html#faq10018916

²² Code pénal https://www.legifrance.gouv.fr/codes/texte_lc/LEGITEXT000006070719/

- **Ֆրանսիայի Սոցիալական ցանցերում ատելության խոսքի դեմ պայքարի մասին** ²³ օրինագիծը, որն առաջադրվել է 2019 թվականի հուլիսին, պահանջում է, որ կայքերը ջնջեն ատելության խոսք պարունակող բովանդակությունը հրապարակումից հետո 24 ժամվա ընթացքում: Այս պահանջը չպահպանելը պատժվում է մեկ տարվա ազատազրկմամբ և մինչև 15,000 եվրո տուգանքով: 2020 թվականի հունիսի 18-ին Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը մերժել է օրենքի նախագծի զգալի մասը²⁴:

- **Ֆրանսիայի «Մամուլի մասին» 1881 թվականի օրենքը**²⁵ ներառում է դրույթներ ատելության խոսքի դեմ, որոնք ուղղված են ռասիստական, հակասեմիտական և այլատյաց արտահայտություններին: Օրենքի 24-րդ բաժինը քրեականացնում է ռասայական խտրականության, ատելության կամ բռնության հրահրումն էթնիկ ծագման, ազգային, ռասայական կամ կրոնական խմբին պատկանելու հիմքով: Հասարակական վայրերում կամ ժողովներում հնչած ցանկացած խռովարար աղաղակ կամ երգ կպատժվի ազատազրկմամբ՝ վեց օրից մեկ ամիս ժամկետով և տուգանքով՝ 16 ֆրանկից մինչև 500 ֆրանկ: Զրպարտության և վիրավորանքի համար քաղաքացիական հայցերը նույնպես օգտագործվում են ատելության խոսքի դեմ պայքարելու համար:

Ֆրանսիայի «Տեղեկատվության մանիպուլյացիայի մասին»²⁶ **օրենքը** (որն ընդունվել է 2018թ. նոյեմբերի 20-ին՝ նախընտրական շրջանում, կեղծ լուրերի դեմ պայքարելու նպատակով ուժեղացնում է սոցցանցում հրապարակումների ու արտասահմանյան լրատվամիջոցների աշխատանքի նկատմամբ վերահսկողությունը: Օրենքի համաձայն՝ գրանցված թեկնածուն կամ կուսակցությունները հնարավորություն են ստանում պայքարել կեղծ տեղեկատվության տարածման դեմ, որը կարող է խախտել հասարակական կարգը կամ փոխել քվեարկության արդար ելքը: Առցանց հարթակի օպերատորները ստեղծել են հեշտ հասանելի և տեսանելի համակարգ, որը թույլ է տալիս իրենց օգտատերերին հաղորդել նման տեղեկատվությունը, հատկապես, երբ դա բխում է երրորդ կողմի անուկից գովազդվող բովանդակությունից²⁷:

Ըստ Հոլանդիայի քրեական օրենսգրքի ²⁸ յուրաքանչյուր ոք, ով հրապարակայնորեն, բանավոր կամ գրավոր, կամ պատկերներով, կամ ժեստերով

²³ Lutte contre la haine sur internet, https://www.assemblee-nationale.fr/dyn/15/dossiers/lutte_contre_haine_internet

²⁴ Reuters, "France's top court rejects core of law targeting online hate speech," 2020, <https://www.reuters.com/article/us-france-tech-regulation-idUSKBN23P320/>

²⁵ Loi du 29 juillet 1881 sur la liberté de la presse, <https://www.legifrance.gouv.fr/loda/id/LEGISCTA000006117630#:~:text=Dans%20chaque%20commune%2C%20le%20maire,seules%20imprim%C3%A9es%20sur%20papier%20blanc.>

²⁶ The French law against the manipulation of information, known as the "Law on the Fight Against the Manipulation of Information," <https://www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000037847559/>

²⁷ LOI n° 2018-1202 du 22 décembre 2018 relative à la lutte contre la manipulation de l'information (1), <https://www.legifrance.gouv.fr/loda/id/JORFTEXT000037847559>

²⁸ Netherlands Criminal Code (Wetboek van Strafrecht), https://wetten.overheid.nl/BWBR0001854/2024-01-01/#BoekTweede_TiteldeelV_Artikel137c

հրահրում է ատելություն կամ խտրականություն մարդկանց նկատմամբ, կամ բռնություն է գործում անձի կամ անհատի ունեցվածքի դեմ նրանց ռասայի, կրոնի կամ համոզմունքի, սեռի, ֆիզիկական, հոգեբանական կամ մտավոր հաշմանդամության հիմքով, պատժվում է ազատազրկմամբ՝ ոչ ավելի, քան երկու տարի ժամկետով կամ չորրորդ կարգի տուգանքով (հոդված 137գ, 137դ):

Շվեդիայի «Բնակչության խմբի նկատմամբ ատելություն հրահրելու մասին» օրենքը ստեղծվել է 1948 թվականին և ի սկզբանե քրեականացրել է միայն «ծագման» և կրոնի վրա հիմնված ատելության հրահրումը: 1970 թվականին օրենքը փոփոխության է ենթարկվել՝ հատուկ նշելով ռասան և մաշկի գույնը, ինչպես նաև ազգային և էթնիկական ծագումը: 2002 թվականին օրենքն ընդլայնվել է՝ ներառելով սեռականության վրա հիմնված ատելությունը և 2018 թվականին՝ գենդերային ինքնության և արտահայտման դեպքերը²⁹:

²⁹ Sweden's law on incitement to hatred against a population group, <https://skma.se/2017/06/gorel-granstrom-den-antisemitiske-bokhandlaren-och-kriminaliseringen-av-hets-mot-folkgrupp/>

Ամփոփելով՝ պետք է փաստել, որ չնայած կիրառված որոշակի ջանքերին, ատելության խոսքի դեմ պայքարի համատեքստում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն ունի զգալի բացեր և բախվում է մարտահրավերների, մասնավորապես՝ առցանց տիրույթում:

Առցանց ատելության խոսքի մասին օրենսդրության բացակայություն

Բացակայում են համապարփակ օրենքներ և դրանց աջակցող արդյունավետ կառուցակարգեր, որոնք հատուկ վերաբերում են առցանց տիրույթում ատելության խոսքին: Թեև գոյություն ունեն ատելության խոսքի դեմ ընդհանուր դրույթներ, դրանք բավականաչափ մանրամասն չեն համացանցի նրբություններին և հատուկ մարտահրավերներին անդրադառնալու համար և չեն բնորոշում ատելության խոսքի արտահայտման տարածված հիմքերն ու ձևերը (բնույթը):

Իրավական սահմանումների բացակայություն

Հայաստանի օրենսդրությունում ատելության խոսքի հստակ սահմանում չկա, այլ միայն կան որոշակի իրավական դրույթներ, որոնք կարող են վերաբերել ատելության խոսքին, որոնք լայն են և անորոշ իսկ թեմային առնչվում են անուղղակի: Ատելության խոսքի հստակ սահմանման բացակայությունը ՀՀ օրենսդրությունում հանգեցնում է մի շարք իրավական և հասարակական խնդիրների, ինչպիսիք են իրավական անորոշությունը և ազատ խոսքի սահմանափակումները: Խոսքի ազատությունը պետք է պաշտպանվի, մինչդեռ ատելության խոսքի սահմանման բացակայությունը կարող է հանգեցնել ոչ հստակ սահմանափակումների, որոնք կարող են վնասել խոսքի ազատությանը և հանդիսանալ լծակ իշխանությունների ձեռքին: Առանց հստակ սահմանման դժվար է որոշել, թե ինչպիսի արտահայտություններն ու գործողությունները կարող են համարվել ատելության խոսք, ինչը հանգեցնում է տարբեր և ոչ հետևողական կիրառումների:

Ատելության խոսքի սահմանումներ կարող ենք տեսնել միջազգային տարբեր փաստաթղթերում, այնուամենայնիվ, մինչ օրս մարդու միջազգային իրավունքի համաձայն ատելության խոսքի համընդհանուր սահմանում չկա: Ստորև մի քանի օրինակներ, որոնցում տրվել են ատելության խոսքի բացատրություն-սահմանումներ.

- Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (97)20 հանձնարարական անդամ պետություններին ատելության խոսքի շրջանակի մասին. «Ատելության խոսք տերմինի ներքո պետք է ընկալվի արտահայտման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը,

ներառյալ՝ ազդեցիվ ազգայնականության և էթնոցենտրիզմի անհանդուրժողական արտահայտությունները, փոքրամասնությունների, միգրանտների և ներգաղթյալ ծագում ունեցող մարդկանց նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը»:

- ՄԱԿ-ի ռազմավարությունն ու գործողությունների պլանն ատելության խոսքի վերաբերյալ միավորված շրջանակ են տրամադրում, որպեսզի ՄԱԿ-ը համաշխարհային մակարդակով դիմակայի այս խնդրին: Այս ռազմավարության մեջ ատելության խոսքը սահմանվում է որպես՝ «ցանկացած տեսակի հաղորդակցություն՝ խոսքի, գրության կամ վարքի միջոցով, որն արտահայտում է անարգանք, օգտագործում է խտրական խոսք՝ անձի կամ խմբի նկատմամբ՝ հիմնված նրանց ինքնության վրա, այսինքն՝ նրանց կրոնի, էթնիկ ծագման, ազգության, ռասայի, սեռի կամ ինքնության այլ գործոնի հիման վրա»:

- Ըստ ՄԱԿ-ի Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 20-րդ հոդվածի՝ ատելության խոսք է համարվում «ցանկացած քարոզչություն պատերազմի օգտին և ցանկացած խտրականության, թշնամանքի կամ բռնության խթանում ազգային, ռասայական կամ կրոնական հիմքերով»:

Ատելության խոսքի հստակ սահմանումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում կարևոր քայլ է իրավական և հասարակական արդարության ապահովման համար: Հստակ և միանշանակ ձևակերպումները կօգնեն պայքարել խտրականության և ատելության դեմ, ինչպես նաև կապահովեն խոսքի ազատության և իրավունքի միջև հավասարակշռումը:

Կիրարկման մեխանիզմները

Ատելության խոսքի մասին օրենքների առցանց կիրառման հարցում զգալի մարտահրավերներ կան, որոնք պահանջում են համալիր մոտեցում: Անհրաժեշտ են օրենսդրական բարեփոխումներ, տեխնիկական և մասնագիտական ռեսուրսների զարգացում, ինչպես նաև հասարակության տեղեկացվածության բարձրացում և միջազգային համագործակցության ընդլայնում:

Առցանց հարթակներում ատելության խոսքի մոնիտորինգը պահանջում է բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունեն փորձառություն թվային վերլուծության, տվյալների մայնինգի³⁰ և այլ տեխնոլոգիական ոլորտներում: Բացի այդ, սոցիալական հարթակները գտնվում են Հայաստանի սահմաններից դուրս և չեն հանդիսանում իրավաբանական անձ երկրի ներսում, ինչը դժվարացնում է դրանց նկատմամբ օրենքների կիրառումը և պահանջում է միջազգային համագործակցություն:

³⁰ Տվյալների մայնինգը կամ տվյալների հետազոտումն օրինաչափությունների հայտնաբերման գործընթացն է մեծ տվյալների ամբողջության մեջ, որը ներառում է մեքենայական ուսուցման, տվյալների բազայի համակարգերի և վիճակագրության մեթոդներ:

Ինչպես հարցազրույցներից մեկում նշել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության կիբեռնահանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ռոբերտ Ադիլխանյանը, համացանցում վայրկյանների ընթացքում կատարված գործողության վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող տվյալներ ստանալու համար քննիչները երբեմն պետք է հարցումներ կատարեն մի քանի պետությունների իրավասու մարմինների: Օրինակ, տուժողը կարող է գտնվել մի երկրում, հանցավորը՝ մեկ այլ, ինտերնետային ծառայություն մատուցող ընկերությունը՝ երրորդ, իսկ պահվող տվյալները՝ չորրորդ երկրում: Ինչ խոսք, տվյալների ծավալը, համակարգչային համակարգերի հսկայական քանակը, տարբեր քողարկիչ միջոցների կիրառումը, ֆինանսական միջոցների փոխանցման էլեկտրոնային եղանակները և տվյալ հանցատեսակին բնորոշ այլ առանձնահատկությունները որոշակի բարդություններ են ստեղծում քննության համար՝ քննիչներից պահանջելով տիրապետել ժամանակակից տեխնոլոգիաներին՝ գտնելու համար այն ճանապարհը, որը հնարավորություն կտա հասնել ճշգրիտ ապացույցների ստացմանն ու հանցագործությունների բացահայտմանը»:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետությունը դեռևս 2008 թվականին վավերացրել է «Կիբեռնահանցագործությունների մասին» Բուդապեշտի կոնվենցիան, որը հանդիսանում է ոլորտի ամենահիմնական և համապարփակ միջազգային պայմանագիրը, որտեղ սահմանված է նաև կիբեռնահանցագործություն համարվող հանցագործությունների հիմնական ցանկը: 2019 թվականից Կոմիտեում գործող համակարգչատեխնիկական լաբորատորիան տեխնիկական հագեցվածության աստիճանով և մասնագիտական կարողություններով կարող է համարվել տարածաշրջանի լավագույններից մեկը:

Չնայած այս ոլորտում տարվող աշխատանքներին, շարունակում է արդիական խնդիր մնալ այլ պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող իրավական օգնություն ցույց տալու մասին հարցումների կատարման օպերատիվության հարցը, որի պայմաններում, այն դեպքերում, երբ առնչվում ենք տվյալ խնդրին, դժվար է ողջամիտ ժամկետում ստանալ գործի բացահայտման համար կարևոր տեղեկատվություն: Սակայն, անգամ դրա ստացման պայմաններում, ՀՀ ինտերնետային կապի օպերատորների տեխնիկական հնարավորությունները հաճախ թույլ չեն տալիս ստանալ ինտերնետային հասանելիություն ստացած բաժանորդների տվյալները՝ հաշվի առնելով միևնույն պահին նույն IP-ին հարյուրավոր բաժանորդների տրամադրելու (NAT-IP) հանգամանքը:

Ազդարարման և մոնիտորինգի համապարփակ համակարգերի բացակայություն

Խոսքի ազատության և հարթակի հաշվետվողականության հավասարակշռումը մնում է վիճելի խնդիր: Առկա է ատելության խոսքի դեպքերի առցանց ազդարարման և մոնիտորինգի կայուն համակարգերի բացակայություն: Սա հանգեցնում է թերազդարարման և տվյալների ոչ համարժեք հավաքագրման, ինչը խոչընդոտում է խնդրի շրջանակը հասկանալու և նպատակային միջամտությունների մշակմանն ուղղված ջանքերին: Շատ կանայք չեն հայտնում

առցանց ունեցությունների մասին՝ վրեժխնդրությունից վախենալու կամ իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ անվստահության պատճառով: Ատելության խոսքի հայտնաբերումը և դրա դեմ պայքարը կարևոր են հասարակական կարգի պահպանման և խտրականության կանխարգելման համար, սակայն խոսքի ազատության սահմանափակման դեպքում անհրաժեշտ է կիրառել հստակ մեխանիզմներ՝ պետության կողմից հնարավոր չարաշահումները կանխելու նպատակով: Այս համատեքստում կարևոր է ապահովել, որ պետությունը չօգտագործի ատելության խոսքի սահմանումները որպես լռեցման գործիք: Ինչպես արդեն նշվեց, օրենքներում պետք է հստակ սահմանվեն, թե ինչն է համարվում ատելության խոսք, ինչի վրա պետք է հիմնված լինեն բոլոր որոշումները: Սահմանումները պետք է ներառեն կոնկրետ չափանիշներ, որոնք թույլ կտան տարբերակել ատելության խոսքը և խոսքի ազատությունը:

Միջնորդների պարտավորություն

Իրավական դաշտը հստակ չի սահմանում ինտերնետային միջնորդների (օրինակ՝ սոցիալական մեդիա հարթակներ, հոսթինգային մատակարարներ) պարտականություններն ատելության խոսքի բովանդակությունը կառավարելու և հեռացնելու հարցում: Այս անորոշությունը կարող է հանգեցնել այս հարթակների կողմից կամ չափից ավելի գրաքննության, կամ թերգրաքննության:

Հանրային իրազեկում և կրթություն

Առկա է հանրային իրազեկման և կրթության բացն այն մասին, թե ինչ է իրենից ներկայացնում ատելության խոսքն ու առցանց նման վարքագիծ դրսևորելու իրավական հետևանքները: Իրազեկվածության այս պակասը նպաստում է թվային հարթակներում ատելության խոսքի շարունակական տարածմանը: Պետք է նշել, որ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին ՀՀ օրենքում ոչ մի անդրադարձ չկա ատելության խոսքին, առցանց տիրույթում ատելության խոսքին, առցանց հանցագործություններին, կիբեռբուլինգին:

Խոսքի ազատության և դրա կանոնակարգման հավասարակշռում

ՀՀ օրենսդրությունը պայքարում է խոսքի ազատության պաշտպանությունը հավասարակշռելու և ատելության խոսքը կարգավորելու անհրաժեշտության հետ: Այս հավասարակշռությունը կարևոր է, բայց դժվարին, հատկապես բազմազան և քաղաքականապես զգայուն առցանց խոսույթի համատեքստում:

Այս բացերի վերացումը պահանջում է բազմակողմ մոտեցում, ներառյալ օրենսդրական բարեփոխումները, իրավապահ մարմինների կարողությունների զարգացումը, հաշվետվությունների և մոնիտորինգի մեխանիզմների մշակումը, հանրային կրթական քարոզարշավները և համագործակցությունը միջազգային մարմինների և ինտերնետային միջնորդների հետ:

Թվային քաղաքականությանն ուղղված առաջարկներ

Այս բաժնում ներկայացված առաջարկների հասցեատերերն են՝ Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, աջակցող կողմերը՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջարկ 1. Մշակել թվային լուծումներ, որոնք թույլ կտան ավտոմատ կերպով նույնականացնել հայերենով, հայերեն լեզվով՝ լատինական և կիրիլատառ այբուբեններով ատելության խոսք պարունակող բովանդակությունները՝ սոցիալական մեդիայում հրապարակված գրառումների մեկնաբանությունների դաշտում: Թվային լուծումները կարող են նպաստել ատելության խոսքի նույնականացմանը՝ մշտադիտարկման միջոցով:

Առաջարկ 2. Նպաստել Հայաստանում «Թվային դեսպան»-ի ինստիտուտի կայացմանը, որը կհանդիսանա Հայաստանի Հանրապետության և հասարակության ներկայացուցիչը գլոբալ տեխնոլոգիական հարթակների հետ հարաբերություններում և կապշտպանի Հայաստանի Հանրապետության և ՀՀ քաղաքացիների թվային իրավունքները՝ նպաստելով վստահելի, խտրականությունից ու ատելության խոսքից զերծ առցանց միջավայրի ստեղծմանը՝ ապահովելով ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանությունը թվային տիրույթում: Այս ինստիտուտի ստեղծմանն ուղղված քայլերն արդեն իսկ նախաձեռնվում են «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» հասարակական կազմակերպության կողմից՝ «Հայաստանի մեդիայի զարգացման ծրագրի» շրջանակում, որն իրականացվում է Ինտերնյուս Նեթվորքը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:

Առաջարկ 3. Տեղական գրանցված ՉԼՄ-ների համար մշակել առցանց միջավայրում երրորդ կողմ (օգտատեր) հանդիսացող անձանց կողմից՝ ՉԼՄ-ների սոցիալական մեդիայի հարթակներում գործող էջերում հրապարակված գրառումների (հոդվածներ, լուսանկարներ, տեսանյութեր և այլն) ներքո հրապարակվող բովանդակությունների (մասնավորապես՝ մեկնաբանություններ) մոդերացման քաղաքականություններ, որոնց կատարումը պետք է լինի պարտադիր պայման: Քաղաքականությունը և/կամ օրենսդրական նախաձեռնությունը պետք է պարունակի վերահսկման, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև մոնիտորինգային մեխանիզմներ: Այս մասով պարտավորությունների սահմանումը սոցիալական մեդիա հարթակների նկատմամբ կարող է սահմանվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում որոշակի դրույթների ներառմամբ: Տեղական մեդիաների նկատմամբ բովանդակության մոդերացիայի պատասխանատվությունը կարող է ամրագրվել «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում:

Առաջարկ 4. Գլոբալ մեդիա հարթակների հետ ստեղծել բարենպաստ հարաբերություններ և համագործակցության նախաձեռնություններ, որոնց

շրջանակում ատելության խոսքի վերահսկումն այդ հարթակների կողմից հնարավոր կլինի նաև հայերենով, հայերեն լեզվով՝ լատինական և կիրիլատառ այբուբեններով: Սա բխում է նաև այդ հարթակների օգտագործման դրույթներից և պայմաններից ու միջազգային ստանդարտներից, որոնք կրում են պարտադիր բնույթ՝ առցանց միջավայրում հանրային հաղորդակցության և էթիկայի կարգավորման ուղղությամբ:

Կրթության քաղաքականությանն ուղղված առաջարկներ

Այս բաժնում ներկայացված առաջարկների հասցեատերն է՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, աջակցող կողմերը՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջարկ 1. Կրթության պետական ռազմավարությունում ներառել ատելության խոսքի դեմ ուղղված և էթիկական նորմերին համապատասխանող հաղորդակցության, մարդու արժանապատվության և առցանց վարքագծի վերաբերյալ սովորողների իրազեկմանն ու գիտելիքների աճին խթանող գործողությունների պլան, որը կբխի ազգային մակարդակում ատելության խոսքի դեմ պայքարի կրթության նպատակներից: Մշակել քայլեր և աջակցել այնպիսի գործողություններին, որոնք հնարավորություն կտան ֆորմալ՝ առարկայական և ոչ ֆորմալ՝ արտադպրոցական/արտալսարանային նախաձեռնությունների իրականացմանը (վերապատրաստման ծրագրեր, դասագրքերի բովանդակության վերանայման ծրագրեր, խմբակների իրականացում և այլն) և դրանց միջոցով հանրային իրազեկմանը: Հանդես գալ օրենսդրական բարեփոխումների առաջարկներով և կրթական հաստատություններում ատելության խոսքը բացառող նախաձեռնություններով, որոնք համապատասխանում են միջազգային կրթական նորմերին և ստանդարտներին:

Առաջարկ 2. Բոլոր տեսակի կրթական հաստատությունների (նախակրթական, հանրակրթական, բարձրագույն ուսումնական հաստատություններ) համար մշակել ատելության խոսքի դեմ պայքարի, էթիկական հաղորդակցության և առցանց վարքագծի քաղաքականություններ: Իրականացնել դրանց տեղայնացման և կիրառման ուղղությամբ վերահսկման աշխատանքներ, կազմակերպել իրազեկման լայն արշավներ, համագործակցել նաև քաղաքացիական հասարակության կառույցների հետ:

Առաջարկ 3. Համագործակցել Հանրային հեռուստաընկերության հետ և մշակել կրթական ու իրազեկման այնպիսի հեռուստանախագծեր, որոնք կնպաստեն հասարակության լայն շերտերի իրազեկմանն ատելության խոսքի վնասակար հետևանքների, էթիկական հաղորդակցության և առցանց էթիկական վարքագծի վերաբերյալ:

ՉԼՍ-ների ինքնակարգավորմանն ուղղված առաջարկներ

Այս բաժնում ներկայացված առաջարկների հասցեատերերն են՝ ՉԼՍ-ների ինքնակարգավորման նախաձեռնությամբ հանդես եկող հասարակական և մեդիա կազմակերպությունները, ՉԼՍ-ների էթիկայի Դիտորդ մարմինը (ԴՄ), աջակցող

կողմերը՝ քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջարկ 1. Վերանայել Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը³¹ (այսուհետ՝ Կանոնագիր) և ի հավելում Կանոնագրի երրորդ գլխի՝ «Խմբագրական անկախություն» բաժնի 3.5.6 և 3.5.7 կետերին ավելացնել՝

Ա) միևնույն օգտատիրոջ կողմից թույլ տրվող պարբերական ատելության խոսքի պարագայում վերջինիս արգելափակման վերաբերյալ ՉԼՄ-ի պարտավորության և պատասխանատվության վերաբերյալ դրույթ,

Բ) լսարանի ուշադրությունը գրավող, համատեքստից դուրս, հուզական և զայրույթ առաջացնող արհեստական, ոչ անհրաժեշտ ու կյուբի հիմնական բովանդակությունից չբխող վերնագրերի միջոցով հանրային բարկություն հրահրող և ատելության խոսքի համար պարարտ հող ստեղծող քայլերը, ինչպես նաև այդ գործողություններով պայմանավորված անհատի, որոշակի խմբի թիրախավորման գործընթացը բացառելու վերաբերյալ դրույթ

Իրավական բարեփոխումներին ուղղված առաջարկներ

Այս բաժնում ներկայացված առաջարկների հասցեատերերն են՝ ՀՀ կառավարությունը, Ազգային ժողովը, Արդարադատության նախարարությունը, աջակցող կողմերը՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության և մեդիա կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Առաջարկ 1. Օրենսդրորեն սահմանել «ատելության խոսք»-ը, ատելության խոսքին և դրա բնույթին առնչվող հարակից տերմիններն (առցանց ատելության խոսք, թշնամանք, բռնության սադրում, հայիոյանք, սեռական բնույթի հայիոյանք, խտրականություն) ու դրանց նկատմամբ կիրառվող տույժի միջոցները և պատասխանատվության ձևերը իրավաբանական և ֆիզիկական անձանց համար, որոնք մի կողմից ստանձնում են դրանց մոդերացիան, մյուս կողմից հանդիսանում են տարածողը: Մշակել տեղական օրենսդրություն ուղղված ատելության խոսքի դեմ պայքարին, որը կկարգավորի առցանց և անցանց միջավայրում ատելության խոսքի կիրառումը քաղաքացիների, պաշտոնատար անձանց, ՉԼՄ-ների, պետական, մասնավոր, հասարակական ինստիտուտների և իրավակազմակերպական ձևով տարբերվող այլ հաստատությունների, հանրային հեղինակություն վայելող անհատների, հանրային դերակատարների, քաղաքական և քաղաքացիական աշխատողների, հանրության կողմից: Հստակ սահմանել խոսքի ազատության և ատելության խոսքի բաժանարարը՝ տարանջատելով դրանք միմյանցից և սահմանելով դրանց չափման ու նույնակացման ցուցիչներ՝ բացառելով խոսքի ազատության սահմանափակումները, ատելության խոսքի վերագրելու հիմքով հետապնդումները:

³¹Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր-
https://ypc.am/wp-content/uploads/2024/06/Code-of-Ethics_arm_edites_May-18-2024.docx.pdf

Առաջարկ 2. Սոցիալական մեդիա հարթակներին հաշվետու դարձնելու նպատակով անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, մասնավորապես՝ ընդլայնելով այն սուբյեկտների ցանկը, որոնք պարտավոր են տրամադրել տեղեկատվություն:

Ա) **Լրացնել օրենքի 3-րդ հոդվածը** - «Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները. «տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք, **Հայաստանի Հանրապետության թվային տիրույթում ծառայություն մատուցող և/կամ իրավաբանական անձ հանդիսացող և/կամ թվային մատակարար հանդիսացող սոցիալական մեդիա հարթակներ**»:

Բ) **Լրացնել օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետը** - «Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը. 2. Տեղեկատվություն տնօրինողն անհապաղ հրապարակում կամ այլ մատչելի ձևով հանրությանը տեղեկացնում է իր տնօրինության տակ գտնվող այն տեղեկությունը, որի հրապարակումը կարող է կանխել պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը, **ինչպես նաև ատելության խոսքի առցանց տարածման վտանգը**»:

Գ) **Խմբագրել օրենքի 7-րդ հոդվածը՝ ավելացնելով 3.1 կետ** - «Հոդված 7. Տեղեկությունների մատչելիության և հրապարակայնության ապահովումը. «3.1 Սոցիալական մեդիա հարթակները պարտավոր են տարեկան հրապարակել զեկույց՝ ներառելով հետևյալ տվյալները. ա) ատելության խոսք պարունակող հեռացված բովանդակության քանակը, դրանց առնչվող վերլուծական և դեմոգրաֆիական վիճակագրությունները, բ) կատարված գործողությունների մասին ժամանակագրական տեղեկատվություն: Տարեկան զեկույցները ներկայացվում են լիազոր մարմնին և հրապարակվում են սոցիալական մեդիա հարթակների պաշտոնական կայքերում»:

Առաջարկ 3. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում, ըստ որի կկիրառվեն տուգանքներ այն հարթակների (հարթակները սպասարկող ընկերությունների) նկատմամբ, որոնք չեն պահպանում Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի պահանջները: **Հոդված X. Սոցիալական մեդիա հարթակների կողմից ստանձնած պարտավորությունների խախտումը.** 1. Սոցիալական մեդիա հարթակները, որոնք լիազոր մարմնին սահմանված ժամկետում և կարգով չեն ներկայացնում, ինչպես նաև չեն հրապարակում, և/կամ թերի են հրապարակում, և/կամ հրապարակում են կեղծ տեղեկատվություն պարունակող զեկույց «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմաններով, ենթարկվում են վարչական պատասխանատվության»:

Առաջարկ 4. Պարտավորեցնել մեդիա հարթակներին ավելի խիստ վերահսկել ատելության խոսքը և ապատեղեկատվությունը, ինչպես նաև հեռացնել նման բովանդակությունը՝ օգտատիրոջ կողմից նման պահանջ ստանալուն պես: Օրենսդրական փոփոխությամբ կամ նախաձեռնությամբ կարելի է այն համապատասխանեցնել արդեն իսկ միջազգային ստացված փորձին՝ Եվրամիության Digital Services Act (DSA)-ի և NetzDG-ի (իրավական ուսումնասիրությամբ արդեն իսկ անդրադարձ արվել է այս երկու մոդելներին) նորմերին:

Մշակել թվային ծառայությունները կարգավորող ակտ, որը կարգավորում է թվային հարթակներում տարածվող տեղեկատվությունը և անդրադառնում է հետևյալին. ա) սոցիալական մեդիա հարթակները պարտավոր են մշակել և իրականացնել հստակ քաղաքականություն, որն ուղղված է ատելության խոսքի և ապատեղեկատվության վերահսկմանն ու կանխարգելմանն ազգային մակարդակում, որտեղ գործում են, բ) սոցիալական մեդիա հարթակները պարտավոր են ապահովել իրենց օգտատերերի կողմից հրապարակվող բովանդակության մշտադիտարկումը և հեռացնել խախտում պարունակող բովանդակությունները, գ) սոցիալական մեդիա հարթակները պետք է հրապարակեն տարեկան զեկույցներ, որոնք պարունակում են տվյալներ հեռացված բովանդակության և ձեռնարկված գործողությունների վերաբերյալ, դ) սոցիալական մեդիա հարթակները պետք է ստեղծեն պարզ և մատչելի համակարգ, որը թույլ է տալիս օգտատերերին ներկայացնել բողոքներ ապատեղեկատվություն և/կամ ատելության խոսք պարունակող բովանդակության վերաբերյալ, ե) սոցիալական մեդիա հարթակները պարտավոր են օգտատերերի կողմից բողոք ստանալուց հետո սահմանված ժամկետում հեռացնել օգտատիրոջը վերաբերող ապատեղեկատվությունը և/կամ ատելության խոսք պարունակող բովանդակությունը, զ) սոցիալական մեդիա հարթակները պարտավոր են պահպանել բողոքների գրանցման և հեռացված բովանդակության վերաբերյալ հաշվետվություններ, որոնք պետք է ներկայացվեն տարեկան՝ լիազոր մարմին:

Սույն օրենքի պահանջները չպահպանելու դեպքում սոցիալական մեդիա հարթակները ենթակա են վարչական պատասխանատվության՝ ՎԻՎ 33 օրենքով սահմանված կարգով և չափով»:

Սույն առաջարկի «Դ» կետի ապահովման համար պետությունը կարող է աջակցել սոցիալական մեդիա հարթակներին և ստեղծել ազգային պաշտոնական հարթակ՝ ապատեղեկատվության և ատելության խոսք պարունակող բովանդակության մասին հաղորդելու համար՝ Ֆրանսիայում գործող PHAROS պորտալի³² օրինակով (Ֆրանսիայում Thales-ի կողմից ներքին գործերի նախարարության համար մշակված հատուկ PHAROS պորտալ է, որով Ֆրանսիայում համացանցի օգտատերերը կարող են զեկույցել անօրինական առցանց բովանդակության և վարքագծի մասին):

Առաջարկ 5. Համագործակցել փաստաբանական պալատի հետ և ներգրավել անկախ փաստաբանների և իրավաբանների, որոնք կգբաղվեն ատելության խոսքի դեպքերի հետազոտությամբ և կհամագործակցեն

³² Pharos Portal, <https://www.internet-signalement.gouv.fr/PharosS1/etape/contenu>

նստիկանության և կառավարության հետ (օրինակ՝ ԱՄՆ-ում Anti-Defamation League (ADL) կազմակերպությունը[1]): Անկախ փաստաբանները կկարողանան իրականացնել չեզոք հետազոտություններ և պաշտպանել ատելության խոսքի գոհերի իրավունքները: Համագործակցությունը կառավարության և նստիկանության հետ կբարելավի տեղեկատվության փոխանակումը և գործընթացների համակարգումը՝ նպաստելով արդարադատության արդյունավետությանը: Անկախ հետազոտությունները և գործընթացների թափանցիկությունը կբարձրացնեն հանրային վստահությունը և հասարակական աջակցությունը: Փաստաբաններն ու իրավաբանները կարող են իրականացնել իրավաբանական կրթական ծրագրեր և վերապատրաստումներ՝ բարձրացնելով հանրության և իրավապահ մարմինների աշխատակիցների գիտելիքները և հմտությունները ատելության խոսքի վերաբերյալ:

Akin, J., Goldberg, A., Myers, G., & Stewart, J. (2013). Language behavior: A Book of Readings in Communication. For Elwood Murray on the Occasion of His Retirement. Walter de Gruyter.

Brown, A. (2018). What is so special about online (as compared to offline) hate speech? *Ethnicities*, 18(3), 297-326. <https://doi.org/10.1177/1468796817709846>

Dreißigacker, A., Müller, P., Isenhardt, A., & Schemmel, J. (2024). Online hate speech victimization: consequences for victims' feelings of insecurity. *Crime Science*, 13(1). <https://doi.org/10.1186/s40163-024-00204-y>

Eastern Christianity and the Cold War, 1945-91. (2010). <https://doi.org/10.4324/9780203865941>

Gagliardone, I., Gal, D., Alves, T., & Martinez, G. (2015). Countering Online Hate Speech. UNESCO Publishing.

Haynes, J. (2018). The People vs. Democracy. Why Our Freedom is in Danger and How to Save It, by Yascha Mounk. *Democratization*, 26(1), 161–163. <https://doi.org/10.1080/13510347.2018.1456532>

Husso, M., Karkulehto, S., Saresma, T., Laitila, A., Eilola, J., & Siltala, H. (2020). Violence, gender and affect: Interpersonal, Institutional and Ideological Practices. Springer Nature.

Keipi, T., Näsi, M. J., Oksanen, A., & Räsänen, P. (2016). Online Hate and Harmful Content: Cross-National Perspectives. <https://helda.helsinki.fi/bitstream/10138/311892/1/>

Levendusky, M. S. (2019). Lilliana Mason. *Uncivil Agreement: How Politics Became Our Identity*. Chicago: University of Chicago Press. 2018. 192 pp. *Public Opinion Quarterly*, 83(2), 475–477. <https://doi.org/10.1093/poq/nfz019>

Lippa, R. A. (2005). Gender, Nature, and Nurture. In Routledge eBooks. <https://doi.org/10.4324/9781410612946>

Media.am (2023). Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառնան հետազոտություն. <https://drive.google.com/file/d/1625JupTgSTsNPTGBf-tuy-TIJowAYEbZ/view>

Dreißigacker, A., Müller, P., Isenhardt, A., & Schemmel, J. (2024). Online hate speech victimization: consequences for victims' feelings of insecurity. *Crime Science*, 13(1). <https://doi.org/10.1186/s40163-024-00204-y>

Nikoghosyan, H., & Ter-Matevosyan, V. (2022). From 'Revolution' to War: Deciphering Armenia's Populist Foreign Policy-Making Process. *Journal of Southeast European and Black Sea Studies*, 23(2), 207–227. <https://doi.org/10.1080/14683857.2022.2111111>

Saha, K., Chandrasekharan, E., & De Choudhury, M. (2019). Prevalence and Psychological Effects of Hateful Speech in Online College Communities. *Proc ACM Web Sci Conf. 2019 June*. <https://doi.org/10.1145/3292522.3326032>

Ullmann, S., & Tomalin, M. (2019). Quarantining online hate speech: Technical and ethical perspectives. *Ethics and Information Technology*, 22(1), 69-80. <https://doi.org/10.1007/s10676-019-09516-z>

Ullmann, S., & Tomalin, M. (2019). Quarantining online hate speech: Technical and ethical perspectives. *Ethics and Information Technology*, 22(1), 69-80.
<https://doi.org/10.1007/s10676-019-09516-z>

Waisbord, S. (2020). Mob Censorship: Online harassment of US journalists in times of digital hate and populism. *Digital Journalism*, 8(8), 1030–1046.
<https://doi.org/10.1080/21670811.2020.1818111>

Woodward, W. D. (2000). Transactional Philosophy as a basis for Dialogue in Public Relations. *Journal of Public Relations Research*, 12(3), 255-275.

Սուքիասյան Նարեկ (2024). Պոպուլիզմն ու Հայաստանի արտաքին քաղաքականությունը. Civilnet. <https://www.civilnet.am/news/769698/պոպուլիզմն-ու-հայաստանի-արտաքին-քաղաքականությունը/amp/>

«Դու մի հատ «կուխնուց» դուրս արի, նոր ուրիշներին Ֆեյսբուքից դուրս գալու խորհուրդ տուր. Փաշինյան» - <https://www.youtube.com/watch?v=kFsUfK7E7bU/>

Առանցքային տեղեկատուների հետ ֆոկուս խմբային քննարկումների և անհատական խորքային հարցազրույցների անկացման ուղեցույց

Մոդերատորը ներկայանում է, ներկայացնում հանդիպման նպատակը, հետազոտության պատվիրատուներին և թե ինչպես են օգտագործվելու ստացված տվյալները: Պատասխանում է մասնակիցների՝ հետազոտության և տվյալ խմբային հարցազրույցի վերաբերյալ հարցերին:

Ողջունում եմ բոլորիդ, իմ անունն Աշխեն է: Շնորհակալ եմ Ձեր տրամադրած ժամանակի և հետազոտությանը մասնակցելու պատրաստակամության համար: Այս քննարկման թեման սոցիալական մեդիայում առկա ատելության խոսքն է՝ ուղղված հասարակական և քաղաքական ոլորտի կին գործիչներին: Տեղեկացնեմ, որ քննարկումը տևելու է մեկուկեսից երկու ժամ: Ձեր մասնակցությունը կամավոր է: Դուք կարող եք հրաժարվել մասնակցել քննարկմանը, չպատասխանել այն հարցերին, որոնց չեք ցանկանա կամ ցանկացած պահի դադարեցնել Ձեր մասնակցությունը, նույնիսկ քննարկման ավարտից հետո: Այդ պարագայում Ձեր հնչեցրած պատասխանները մենք չենք օգտագործի հետազոտության մեջ: Տվյալների ճշգրիտ մշակման նպատակով մեր զրույցը ձայնագրվում և տեսագրվում է: Ձայնագրությունը և տեսագրությունը հասանելի են լինելու հետազոտական թիմի միայն սահմանափակ թվով անդամների համար, ովքեր պատասխանատու են նյութի մշակման և վերլուծության համար:

Ծանոթություն, ատելության խոսքի մասին ընդհանուր պատկերացումներ (20 րոպե)

1. Խնդրում եմ պատմեք Ձեր մասին: Ինչո՞վ եք զբաղվում, ի՞նչ մասնագիտություն ունեք:
2. Ընդհանուր գծերով, եթե սահմանելու լինեիք, սոցիալական մեդիայում ի՞նչն եք համարում ատելության խոսք, ի՞նչ բնույթի, ի՞նչ տոնայնության արտահայտչամիջոցը:
 - 2.1 Արդյոք առանձնանում է ատելությունը մեդիայում և մեդիայից դուրս: Ո՞րն է դրանց տարբերությունը: Որտե՞ղ է այն ավելի հաճախ հանդիպում, սոցիալական մեդիայում, թե՞ իրական կյանքում:
3. Որքանո՞վ են ատելության խոսքի հետ կապված հարցերը կապվում ձեր աշխատանքի հետ:
 - 3.1 (Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին) Աշխատանքի բնույթը ենթադրում է ատելության խոսքի դեմ պայքար, երբևէ առիթ ունեցե՞լ եք այս խնդրով զբաղվելու: **Եթե այո**, ի՞նչ հանձնառություն է ունեցել այդ նախագիծը և Դուք անձամբ ի՞նչ գործառնություններ եք ունեցել: Արդյո՞ք հաջողված էր նախագիծը: Ինչո՞ւ էր հաջողված: Ինչո՞ւ՞ հաջողված չէր: **Եթե ոչ**, ի՞նչ կերպ եք պատկերացնում ատելության խոսքի դեմ տարվող աշխատանքը, կցանկանայի՞ք աշխատել այս ուղղությամբ:

3.2 (Մեդիայի նեկայացուցիչներին) Ի՞նչ աշխատանք են տանում մեդիաներն այս ուղղությամբ, եթե տանում են: Ո՞րն է մեդիայի հանձնառությունն ատելության խոսքի տարածման վերահսկողության տեսանկյունից, եթե կա այդպիսի դերակատարում:

3.3 Արդյոք Ձեր գործունեության ընթացքում առիթ ունեցե՞լ եք նմանատիպ աշխատանք տանելու: **Եթե այո**, ի՞նչ աշխատանք է դա եղել: **Եթե ոչ**, ի՞նչ աշխատանքներ կցանկանայիք, որ իրականացվեին:

4. Արդյոք խնդի՞ր համարում եք, որ հայկական մեդիայում կա ատելության խոսք:

4.1 Ինչո՞ւ է պետք դրա դեմ պայքարել: Ինչո՞ւ պետք չէ: Արդյոք իրատեսական համարո՞ւմ եք ատելության խոսքի դեմ պայքարն առհասարակ: Կարո՞ղ է այն արդյունավետ իրագործվել: Ո՞ր դաշտում է գտնվում լուծումն ըստ ձեզ՝ օրենսդրական թե՞ ինքնակարգավորման:

4.2 Որո՞նք են, ըստ Ձեզ, խնդրի լուծման ուղղությամբ աշխատելու արդյունավետ տարբերակները:

Ո՞վ, որտե՞ղ, ու՞մ (25 բալլ)

5. **Ովքե՞ր են սոցիալական մեդիայում տարածում ատելության խոսք:** Կա՞ն ընդհանրություններ այն մարդկանց միջև, որոնք պատասխանատու են այն գեներացնելու և տարածելու համար:

Յուշում. *Քաղաքական գործիչներ, հանրային դեմքեր, ՉԼՄ-ների ներկայացուցիչներ, լրագրողներ, մեդիա սպառողներ:*

6. Արդյոք այն համակարգված և թիրախավորված է, թե՞ արտահայտվում է անհատական մակարդակում, երբեմն նաև ինքնաբուխ:

7. Ո՞ր աղբյուրներում է առավել հաճախ հանդիպում ատելության խոսք: Ինչո՞վ է դա պայմանավորված:

Յուշում. *լրատվական կայքերում, սոցիալական մեդիայում, սոցիալական մեդիայի որոշակի էջերում:*

8. Կա՞ որևէ տեսակի վերահսկողություն լրատվամիջոցների, սոցցանցերի էջերը վարողների կամ սովորական օգտատերերի կողմից: Արդյունավետ է այդ վերահսկողությունը:

9. **Առցանց ատելության խոսքի դեմ պայքարի ուղղությամբ կա՞ որևէ ընթացակարգ, օրենսդրական կամ էթիկական կարգավորում,** ինքնակարգավորման մեխանիզմ, որին հետևում են զանգվածային լրատվամիջոցները: Որո՞նք են այդ գործիքները/մեխանիզմները: Ի՞նչ միջոցներ կան իրավիճակը վերահսկելու համար: Որո՞նք են դրանց առավելություններն ու սահմանափակումները:

10. Ըստ ձեզ, ի՞նչ խմբեր են սովորաբար թիրախավորվում, և ո՞րն է դրա պատճառը:

Յուշում. *քաղաքական գործիչներ, ակտիվիստներ, կանայք թե տղամարդիկ, կրոնական, էթնիկ և այլ խմբեր:*

Կին քաղաքական գործիչների և քաղաքացիական ակտիվիստների թիրախավորումը (30 րոպե)

11. Եկեք խոսենք այն մասին, թե ինչպես է համացանցում տեղ գտած ատելության խոսքը թիրախավորում կին քաղաքական գործիչներին և ակտիվիստներին:

9.1 Արդյոք կի՞ն հանրային գործիչներն են ավելի հաճախ հայտնվում թիրախում, թե՞ տղամարդիկ: Ինչո՞վ է դա պայմանավորված:

9.2 Որո՞նք են այն տարբերությունները, որ տեսնում եք կանանց և տղամարդկանց հասցեագրված ատելության խոսքի մեջ: Արդյոք դրանք տարբերվում են իրենց բնույթով, ուժգնությամբ: Կա՞ն ընդհանրություններ առցանց ատելության խոսքում, որոնք ուղղված են կանանց դեմ. օրինաչափություններ, մշակութային առանձնահատկություններ և այլն:

Յուշում. ավելի հաճախ վիրավորական արտահայտություններ, թե հայհոյանքներ են հանդիպում:

12. Ինչպիսի՞ կապ եք տեսնում առցանց ատելության խոսքի թիրախում լինելու և անձի՝ հանրային գործունեություն ծավալող կնոջ քաղաքական հայացքների միջև: Արդյոք կա՞ որևէ օրինաչափություն:

Յուշում. Քաղաքական որևէ կուսակցության հարել, ձախ հայացքներ ունենալ, գենդերային հարցերով զբաղվել, կանանց, LGBS անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվել, ընդհանուր հանրային գործունեություն ծավալել:

13. Եթե խոսենք սոցցանցերում հրապարակումների մեկնաբանությունների մասին, որտեղ կարող ենք գտնել ատելության խոսքի տարբեր դրսևորումներ, ըստ Ձեզ, դրանք ուղղվա՞ծ են կնոջը, ում մասին/մասնակցությամբ հրապարակում է արվել, թե՞ տվյալ հրապարակման մեջ նրա արտահայտած կարծիքին:

14. Ի՞նչ ազդեցություն է ունենում առցանց թիրախավորումը կին քաղաքական գործիչների

1. քաղաքականությամբ/հանրային գործունեությամբ զբաղվելու որոշման/ակտիվության վրա,

2. մեդիագործիքները հանրային գործունեության նպատակով լիարժեք կիրառելու հնարավորության վրա,

3. ազատ արտահայտման, խոսքի ազատության իրավունքի իրացման վրա:

Բնույթ (20 րոպե)

15. Կին քաղաքական և հասարակական դերակատարների դեմ առցանց կիրառվող ատելության խոսքը ի՞նչ բնույթի է:

Պատասխաններում չհնչելու դեպքում՝ հանդիպում են արդյոք

- բռնության քարոզ,
- թշնամական արտահայտություններ,
- խտրական վերաբերմունք,
- հայհոյանքներ, ներառյալ՝ սեռական բնույթի հայհոյանքներ,

- վիրավորական բառեր կամ արտահայտություններ:

16. Ի՞նչ ազդեցություն է ունենում ատելության խոսքի թվարկված բնույթն այս դերակատարների մասնագիտական գործունեության վրա:

Յուշում. մասնագիտությունը փոխել, ավելի քիչ ելույթներ ունենալ, խուսափել հրապարակումներ կատարելուց, ավելի մտածված և կշռադատված հանրային խոսք մշակել:

Ի՞նչ հիմքով են թիրախավորվում (25 թույլ)

17. Ի՞նչ եք կարծում, ավելի հաճախ թիրախավորվում են գենդերային, մասնագիտական, կրոնական (հավատք կամ համոզմունք), քաղաքական կամ էթնիկ խմբեր, թե՛ անհատներ: Արդյոք մարդը թիրախավորվում է որևէ խմբի պատկանելու պատճառով: Եթե նույն մարդը սկսի աշխատել որևէ կուսակցության համար, կամ սկսի զբաղվել հասարակական որոշակի հարցերով, արդյոք զգալի կլինի՞ ատելության խոսքի ինտենսիվության տարբերությունը:

18. Նշվածներից ո՞ր խմբերն են առավել հաճախ թիրախավորվում: Ինչու՞:

- Ազգություն (որո՞նք, ինչու՞),
- Կրոն (որո՞նք, ինչու՞), հավատք կամ համոզմունք,
- Գենդեր, սեռով պայմանավորված խտրականություն (որո՞նք, ինչու՞),
- Քաղաքական հայացքներ, ուժեր, կուսակցություններ (որո՞նք, ինչու՞),
- Սեռական կողմնորոշում,
- Այլ (մանրամասներ):

19. Ի՞նչ եք կարծում, հասարակական կամ քաղաքական ոլորտի կանայք թիրախավորվում են արտաքին հատկանիշների կամ հաշմանդամության հիմքով: Ինչու՞:

20. Ո՞ր թեմաներով հրապարակումներն են առավել հաճախ դառնում ատելության խոսքի գեներացման առիթ: Ինչու՞: Եթե որևէ կին դերակատար թիրախավորված է, դա նշանակում է, որ իր հիշատակմամբ ցանկացած գրառում կամ լուր կարո՞ղ է առիթ դառնալ վիրավորանքի, հայհոյախոսության, թե՛ որոշակի զգայուն թեմաներ կան: Որո՞նք են այդ թեմաները:

21. Երբ ատելության խոսքը հայտնվում է առցանց հանրային տարածքում, ինչպիսի՞ հանրային աջակցություն է այն ստանում: Կա՞ր արդյոք դիմադրություն դրա դեմ, թե՛ այն ընդունված է և լայն աջակցություն ունի: **Ինչպե՞ս է դա արտահայտվում: Ի՞նչ ցուցիչներից ելնելով եք այդպես համարում (հավանումների քանակ, գրառումը տարածելու ինտենսիվություն կամ մեկնաբանության արձագանքների քանակ):**

22. Առհասարակ, եթե վերադառնանք ՉԼՄ-ների կողմից սոցիալական մեդիայում կատարված հրապարակումների ներքո գրառվող մեկնաբանություններին, ի՞նչ կարծիքներ կամ տպավորություն

ունեք այս տիրույթի մասին: Ի՞նչ բովանդակություն է այստեղ կուտակվում: Ու՞մ կողմից: Ի՞նչ տեղ ունի ատելության խոսքն այս տիրույթում:

Խնդրի լուծման առաջարկներ (10 բալլ)

23. Ի՞նչ եք մտածում ատելության խոսքի դեմ օրենսդրական կարգավորումների մասին: Արդյոք դրանք հասցեագրում են առկա խնդիրները: Ի՞նչ բացեր եք տեսնում այս ոլորտում:
24. Ատելության խոսքի դեմ օրենսդրական առկա կամ հավանական կարգավորումները կարո՞ղ են կոնֆլիկտի մեջ լինել խոսքի ազատության իրացման իրավունքի հետ: Ինչու՞: Ինչպե՞ս: